

Առեքեց

ԱՏԱԼԻՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ
ԵԿ

Հ. Յ. ԳԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

1931/

Գ. Ա. Հ Բ Բ Լ
Տպարամ «ՅՈՒՍԱԲԵՐ»

1936

342(47)

S-46

6

01 MAR 2010

ԹԻՒ 32

ՀԱՅ - ՁՎԴ-ԱՐ

ՊԱՏԵՆԱՀԱՐ «ՅՈՒՍԱԲԵՐ»

342(42)

S-46

1/3

92


Բ Ա Խ Բ Ե Կ

ՍԹԱԼԻՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

1031

Հ. Յ. ԳԱՂԵՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ



Գ. Ա. Հ Բ Ե Կ

Յպարամ «Յուսաբեր»

1936

20 AUG 2013

ՕՐԻՆԱԿ 12 ՇԱՀԱԴԻ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ոռուսակամ յեղափոխութիւնը պատահականութեամ
եւ ամբատմերի քմահամոյքի արդիւթք չէ եղած, այլ
հրամայակամ հետեւամք՝ Ոռուսիոյ թերքին եւ արտաքիմ
կացութեամ:

Թոլշեւիկեամ յեղաշրջումը եւ Ղեմիթեամ վարդապե-
տութեամ տիրապետութիւնը Ոռուսիոյ մէջ ու ամոր ազ-
դեցութիւնը Միջազգային սապարիզում, եղած եմ արդիւթ-
քը Ոռուսիոյ ճնշուած դասակարգերի և ժողովրդմերի
տառապաթքներին եւ մասամբ ալ արտաքիմ քաղաքա-
կամ ազդեցութեամց, որոնք օպաստած եմ յեղափոխու-
թեամ ծայրայեղ զարգացմամ:

Իմչամ արձակուած գմդակը, կամ ժայթքող հրա-
բուխը ամհմար է կանգնեցնել, այնպէս ալ ամհմար է
կանգնեցնել ժողովրդակամ պահամչէն թելադրուած յե-
ղափոխութիւնները:

Իմչամ որ բնութեամ մէջ ամէմ գործադութեւն ումի
իրամ համապատասխան Հակազդեցութիւնը հաւասարա-
կըշուութեամ բերելու համար, այնպէս ալ ամէմ յեղափո-
խութիւն ումի իր մէջ թագթուած հակայեղափոխութիւն, ի



1149-2009

վերջոյ բժական կացութեամ, հաւասարակշռութեամ բերելու համար:

Բոլոր ոյժերը շարժումը, լոյսը ծայթը ևայլն կ'ենթարկուին Թոյթ օրէմքթերիմ. ամոմք բոլորն ալ ութիմ Թոյթամամ զօրեղութեամ, շարժմամ գերագոյն ելեւէջը եւ վերելքին համապատասխամ վայրէջրի անխախտ օրէմքթերը:

Եեղափոխութիւմը Թոյթամ ոյժ է որ Յոյթ օրէմքով իր վերելքն ու վայրէջքն ութի նա զանգուածերի հոգեկամ ոյժն է:

Ամտեղի չէ. որ յեղափոխութիւմը համեմատած են ճօճամակի այթ շարժումին հետ, որ իմք քան տարածութիւմ կտրէ դէպի ծախ, այթքամ տարածութիւմ պիտի կտրէ դէպի աջ, իր ծայրայեղ աստիճամին հասնելէ վերջը: Ճօճամակաւոր ժամացոյցի շարժուող լեզուակը յեղափոխութեամ ելեւէջի կոպիտ, բայց իրական պատկերն է:

Ուուսաստամի մէջ տիրապետող ամարդարութիւնները, քասը և բռութիւնները զանգուածների մէջ հոգեկամ ոյժ ստեղծած էին յեղափոխութեամ համար, իմչամ վառողը՝ թնդամօթի: Գերամամակամ կմքուած կառախումքով ճամբրդող լեթին, Թրոցին, Զինովիեն եւ այլք եղամ այթ պատրոյզը որ պայթեցուց այդ ամբարուած վառողը:

Պայթած վառողը ուսւ յեղափոխութիւմը հասցուց իր ծայրագոյթ աստիճամաչափին, միմէն զիմուորակամ կոմումիզմի ժամամակաշըջամը, որմէ յետոյ յեղափոխութեամ ճօճամակը ծախէթ ալ ուղղութեամբ դէպի յետ ճօճեց միթէն մերկայ թուականը, «Ստալիթիզմի» ժամամակաշըջամը, որ իր էութեամբ հակառակն է լեթիթիզմի եւ Տրոցիզմի:

Մակըթացութեամ երեւոյթի առաջն առնելու փորձը ամտեղի և դրա համար ամտեղի դառաւ Դեթիկիմ-Կոլչակների շամքը յեղափոխութեամ դէպի ծախ շարժուող ամիւը յետ դարձնելու: Ամոմք դատապարտուեցամ փշրուելու:

Նոյնպէս տեղատուութեամ առաջն առնելու փորձը լեթիթեամների կամ տրոցկիակամների կողմէ, յետ շարժուող յեղափոխութեամ ամիւլ ծախ դարձնելու, ապարդիմ ջամք է. յեղափոխութիւմը ութի իր բժակամ օրէմքթերը մակըթացութեամ եւ տեղատուութեամ, որո՞ք բարձր են և ամկախ ամրատմերի եւ կուսակցութիւնների կամքից, թէկուզ օրամք կատարուեմ Ստալիթի կամ իր կուսակցութեամ ցուցամիջնի տակ:

«Ստալիթիզմը» ոչ այլ իմչ է, եթէ ոչ երկրագնդի մէկ վեցերորդի մէջ գտնուող ժողովրդների հոգեբամութեամ տեղատուութիւմը, լեթիթ-տրոցկիակամ մակըթացութեամների վերջը:

Ովկիամումները կարող են կարծել, թէ իրենցմէ է մակըթացութեամ եւ տեղատուութեամ ամբումաբերլի ոյժը, եթէ ամոմք կ'ամգիտամամ հեռում գտնուող լուսնի ոյժը, որմէ ծնունդ կ'առնէ այդ անխախտ օրէմքը:

Նոյնպէս Ստալիթ ամկախ իր ուժից, պարզ խաղալիկն է այթ բարձր ուժիմ, որ ուսւ յեղափոխութեամ ծընունդ է տուած և կը մղէ այթ մերթ դէպի սակըթացութիւմ ու այժմս էլ դէպի տեղատուութիւմ. — այդ ոյժը ժողովրդների և դասակարգերի ճնշումն է:

Ցումիս 12-ին Ստալիթ մերկայացրած է մի նոր Սահմամադրութեամ մախագին, որ ոչ միայն հետաքըրքըրակամ է, այլ և չափամիջն է կշռելու Ուուսաստամի յեղափոխութեամ ըթթացքը:

Ուուս յեղափոխութիւմը դեռ չէ վերջացած. ան իր տարուբերումներով իր ըթթացքի մէջ է և ամենայթ հաւասակաթութեամբ նա իր տեղատուութեամ մէջ իսկ կը պատրաստուի նոր մակըթացութեամց, աւելի հզօր եւ լայթ չափերով: Այդպէս պիտի կարծել և համոզուիլ, որովհետև մի յեղափոխութիւմ կը դադրի, երբ հասած է իր պատակներին, Ամեապատակ յեղափոխութիւմ

և սկսուած յեղափոխութիւնը իր Յպատակին չէ հասած դեռ եւս:

Մեմք ասացիմք, որ «Ստալինիզմ»ը տեղատուութիւն է, մահամշ է, բայց սխալ եզրակացութիւն չհանելու համար, այժմեամից կ'ուզեմք մատնամշել, որ ամէմ տեղատուութիւն չի կարող վերադարձ լիմել դէպի հիմք, դէպի իր ելակէտը: — Մեռածը յարութիւն չի առնի, և ոչ աւ լապտերից պոկուած մի ճառագայթ կրծայ յուսաւ իր վերադարձ՝ դէպի լապտերը: Եթէ հիմ ուժիմը, հիմ կալուածատիրութիւնը, աւատակամութիւնը կամ թոյն իսկ սեփականատիրութեամ հիմ հասկացողութիւնները կ'ուզեմք մանկիմ դրութիւնները տեսմել այդ մահամշով, — կը սխալիմ:

Յեղափոխութիւնը անոնց սպամնեց. սպամումը ամփերագրծ է:

Ասացիմք արդէմ, որ յեղափոխութիւնը արդիւնք չէ քմահամոյքի, այլ հրամայական պոռթկում՝ զամգուածների ցասումի և պահամշի: Ամոր ցասումը աննպատակ չէ, թէս բարբարոս և խորտակիչ է: Հմի խորտակման, ոչչացման գործողութիւնը լոկ բարկութեան հետևանք չէ, այլ մպատակ ունի մեխածութեամ վերացումը, աւելչորդութեամց փճացումը, անոնց տեղը ասպարէզ բամալորդութեամց գործողութիւնը լոկ կեանքի և մոր մթմորտի, իմչակէս կը վարուի ամէմ մի փոթորիկ բնութեամ մէջ:

Բայց այդ քանդումը յեղափոխութեամ միջոցն է միայն, անոր բութ մպատակն է ստեղծել կարգեր, որ համապատասխան ըլլամ դասակարգերի և ժողովրդների հոգեկան, մտաւոր, միւթական պահամշներին:

Ահա այս պահամշների իրագործման ճամբու վրայ է, որ ստալինիզմը ու յեղափոխութիւնը իրանց մակընթացութիւններն ու տեղատուութիւնները, իրանց յառաջնալացութիւններն ու մահամշները կ'ումենան:

Մեմք ըմկերագար յեղափոխական եմք, այդպէս լինելով դէմ եղած եմք և երկի կը լիմեմք բոլշևիկ ըմկերագարակամներին:

Մեր և մեզ նման մի շարք յեղափոխական կուսակցութիւնների այդ հակառակութիւնը տարբեր է այն հակառակութիւնից, որ ունին մի շարք դասակարգեր իմքնապաշտպանութեամէ դրդուած, որոնք ըստ էութեամ հակայեղափոխակամներ են: Ցարական, կալուածատիրական, բուժուական դասերի հակառական կամ կալուածատիրական, աւատակամութիւնը կ'ուզեմք, — իմքնապաշտպանութիւն է իրանց գոյութեամ համար:

Մեր հակառակութիւնը մեռնող դասերի պաշտպանութեամ, կամ մեր իմքնապաշտպանութեամ համար չէ, քանի որ մեռն ճշշուած գիւղացի և բամուոր դասին կը պատկանիմք. մեր հակառակութիւնը գալիք թոր կարգերի, նոր ստեղծագործութեամց, նոր կեանքի հասկացութեամց տաբակարձութեամց մէջ է:

Այդպիսով մեմք բոլշևիկներին թշնամի եմք, ոչ թէ իր դասակարգ, իր հակայեղափոխական, այլ իր գաղափարական թշնամի, մպատակ զթելով, որ յեղափոխութիւնը հասմի իր վերջնական համգրուամին. այսինքն՝ դասակարգերի ոչչացման և աշխատաւորութեամ ներդաշնակ կեանքին ու ժողովրդների ազատութեամ և համակեցութեամ:

Կուսակցութիւնների գոյութիւնը պատահականութիւն չէ և ոչ աւ ըստ էութեամ ստեղծագործութիւնն է ամհատների տեսութեամց. աթոթք որոշ չափով խտացումն են ժողովրդների և դասակարգերի պահամշներին: Այս կուսակցութիւններն են ուժեղ և յարատկ, որոթք ունին գաղափարապաշտութիւն: իսկ այդ գաղափարապաշտութիւնը քանի պարզ, քանի հարազատ լիմի գամգուածների հոգերի աթամութեամ և անոնց կեանքի պահամշներին. քանի ամ թէկուզ բազզական և ոչ իսկ գիտական, արծագան:

գը լիմի ժողովրդների և դասակարգերի լայն զանգուած-
ների ապրումներին, այնքան ան ապրելու իրաւումք-
ումի:

Հ. Յ. Դաշտակցութիւնը, որ երկուսից աւելի կայս-
րութիւններ թշնամի ունեցած և միշտ հալածուած է. որ
իր յաջողութեամց կողքին աւելի շատ ծախողութիւններ-
ունեցած է իր 46 տարուայ կեամքի մէջ, բայց քամի որ
կը շարումակէ մթալ իբր կեմսումակ կազմակերպուած
ոյժ, այդ պատահակամութիւն չէ, այլ մի փաստ՝ որ պիտի
վերագրել այն իտէալմերին որ կ'առաջադրէ նա և որո՞մք
հարազատ են աշխատաւոր դասի հոծ զանգուածներին:

Նոյնպէս Մարքս-Լենինինեամ կուսակցութիւնը՝ պատա-
հակամութիւն չէր, որ ան կարողացաւ բաժուորակամ դիկ-
տատորութիւն հաստատել տարիներ շարութակ մեծ Ռու-
սաստանում. իմէ որ կը մշակակէ, թէ նա կամքմ էր մի որոշ
դասի:

Եթէ կ'ուզուի տարակարծութեամց պատճառը զտնել
այս երկու կուսակցութեամց մէջ, պիտի որո՞մել այն՝ ամոմց
մէջ եղած գաղափարի հակասութեամ մէջ:

Մարքս-Լենինինեամ զուտ Թիւթապաշտակամ աշ-
խարհայեացը, աթզիտացումը մարդու և ժողովրդների
հոգեկամ պահամշթերին, իմէպէս և ամոմց ամհատակամու-
թեամ փաստի ոտնահարումը, զուտ բաժուորակամ գերիշ-
խանութեամ հաստատումը և ամտեսումը իբր «Բակայեղա-
փոխական» տարր գիւղացի աշխատաւորութեամ պահամշ-
ներին և այլն, Բակառակ էին և են մեր վարդապե-
տութեամ: Այդ մեղմիտ վարդապետութեամ սահմանա-
փակ լիմելը չարժէ այլեւս մեր կողմէ փաստել, քամի որ
Լենինի համբարգ Ստալինը, իր մոր սահմանադրութեամ
նախագծով ահա եկած է կացնահար ամելու Մարքս-Լե-
նինինեամ հիմնակամ վարքագիծը, թէս ամոմց ամումը կ'օգ-
տագործուի և ամոմց այլափոխուած բանաձեռի ամուամ

տակ իսկ կը կատարուի այդ յեղաշըջումը:

Ստալինը իր մոր սահմանադրութեամ նախագծով,
իրօք որ «Ստալինիզմ» առաջացմելու շաւլի մէջ է: Մի
կողմ թողելով անցեալը, խարուսիկ բանաձեռը, մօտից
հասկամանք թէ այս մոր դրութեամ մէջ ո՞րքան ուսւ յե-
ղափոխութիւնը կը զմայ զանգուածների ցամկութեամ հա-
մաձայն, թէ ո՞րքան ան համապատասխան է մեր ձգ-
տումներին, և թէ այս դրութեամ համդէպ ի՞նչքան կողմ-
ենք և ի՞նչքան հակառակ:

Ամկաշկամդ ըմբռմելու համար, պիտի խօսքը տալ
Ստալինի նախագծին, մէջ բերելով կէտ առ կէտ:

Եւ յետոյ խօսքը պիտի տալ Դաշտակցութեամ ծրա-
գրին, նշգելով թէ իւրաքանչիւր կէտին վերաբերմամք իր
գոյութեամ 46 տարուայ ըմբացքու ի՞նչ հասկացողութիւն
ունեցած է, այս համեմատութենէ վերջ եզրակացութիւններ
համելու համար:

Ստալինինեամ Սահմանադրութիւնը բաղկացած լիմելով
ութը գլուխմերէ, ըմղամէնը 143 յօդուածներով, դիւրու-
թեամք համեմատելու համար Դաշտակցութեամ տեսա-
կէտինիրու հետ, իբր ծամօթութիւն իւրաքանչիւր զլիսին կամ
յօդուածին, մէջբերումներ պիտի ամենք Հ. Յ. ծրագրից,
տպուած ժըմեւ 1925-ին: Իւրաքանչիւր զլուս վերջամալէ
յետոյ, պիտի աւելցնենք մեր դիտողութիւնները և ծա-
մօթութիւնները:

աշխատաւորութիւնը, այլ եւ աշխատաւոր գիւղացիութիւնը երալով անհաւակելի ներհակութեան մը մէջ կը գտնուին տիրող նադիենի դրամական կազմեան:

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. Դ. (էջ 12-13). — «Այս պայմանին մէջ կը միանան եւ ձեռքի կուտան՝ բազմեւու արդիւնաբերական ընչափութիւնը, աշխատաւոր գիւղացիութիւնը եւ յեղափոխական մատականը»:

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. Դ. (էջ 18). — «Երազումել սեփականագրեկորեան (expropriation) միջոցով ընկերութական հարգեր»:

ՅՈՒ. 3. — Խորհրդային Միութեան մէջ ամբողջ իշխանութիւնը կը պատկանի քաղաքի և գիւղի աշխատաւորներուն յանձին խորհուրդներու, պատգամաւորներու և նոյն իրենց աշխատաւորներու։

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. Դ. (էջ 21). — «Ընդիմանոր, հաւասար, զայտի եւ համեմատական ընտրութեան սկզբունքը»:

ՅՈՒ. 4. — Խորհրդային Միութեան տնտեսական հիմքը կը կազմէ ընկերվարական կորպը և արտադրութեան գործիքներու ընկերվարական սեփականութիւնը, որ ձեռք բերուած է շնորհիւ դրամատիրական կարգերու հաշուեյարգարին, արտադրութեան գործիքներու մասնաւոր սեփականութեան ոչնչացումին և մարդու շահագործման ջնջումին։

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. Դ. (էջ 1). — «Մարդկութեան յուազանիւրին չի կրնական կատարած նկատմամբ, գորչափ մարդկային մտի եւ աշխատանի նուանումներ հաւասարապես չեն ծառայեր հասարակութեան բոլոր անդամներու բարուրեան»:

(էջ 6). — «Մասնաւոր սեփականութեան սկզբունքը հիմնախան է ընկերային անհաւասարութեան»:

(էջ 7). — «Արուեստի նույական կատարեագրծութեան ըստ երեսյին պիտի բերեցնեն աշխատաւոր մարդուն յեռք եւ ինչ աշխատանի նետ համեմատարա աւելի մեծ բաժին պիտի յանձանի անոր, բայց անոնք նախառակ նետեամբներ առաջ բերին, ընդիւ մասնաւոր սեփականութեան սիստմին»:

ԳԼՈՒԽ ՀԱԿԵՐԱՅԻՆ ԿՍՈՌՅՑՅԸ

Սահմանադրութան նախազիծ, ներկայացուած Ստալինի կողմէ եւ վաւեացուած նորմերը, Միութիան Ադրբեյջան Կործագիր իշխանութեան կողմէ, որ 1936 նոյեմբեր 25-ին ներութեան պիտի դրույ Համամիութեական համագումարին մէջ։

«ԽՀԱՌՍՏԻԱ», 12 ՅՈՒՆԻՍ 1936.

ՅՈՒ. 1. — Խորհրդագույն Հանրապետութիւններու Ընկերվարական Միութիւնը կը հանդիսանայ բանուորներու և գիւղացիներու ընկերվարական պետութիւն։

Ծանօթ. — Ծրագիր Հ. Յ. Դ. (էջ 21). — «Անդամի օրենքուրիս, հախածենութեան իրաւունք համաժողովրդական նույակութեան»:

ՅՈՒ. 2. — Խորհրդային Հնկերվար, Հանրապետ, Միութեան քաղաքական հիմքը կը կազմեն աշխատաւորներու ներկայացուցիչներու խորհուրդները, որոնք՝ կալուածատէլներու և գրամատէրներու իշխանութեան տապալումին և պրոլետարեատի գիկտատորութեան նուազութերու հետեանքով՝ դարձան մեծ ու հզօր։

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. Դ. (էջ 10). — «Արդիւնագործական ընչափուրկ

807. 5.— Խորհրդային Միութեան մէջ ընկերվաշրական սեփականութիւնը կ'ընդունի կամ պետական սեփականութեան և կամ պետական համագործակցական, կոլխոզային սեփականութեան ձե:

Ծանօթ. — Ծր. Հ Յ. Գ. (էջ 11). — «Անկերվարութեան իրացործումը կը պահանջէ արդիւնազործութեան միջցներու համայնացումը, գիւղական աշխարհին մէջ համայնացնել թէ՝ արդիւնաբերական միջցները, նող, մեմնանաներ եւայլն, եւ թէ՝ աշխատանքը գործակցական (Coopératif) ձեռնարկներու միջոցով»:

807. 6.— ζηηρ, έρκρβι ονηκερφρ, φοιτερερ, ανη-
τωπονερ, φορδατωπονερ, ζανθερ, φιλικαρρωκαν θη-
ρογνερ, έρκωθητοη, οφωγην κ ζρωγην θαμβωνερ, ηρ-
ρωματωπονερ, ανθελ ζηηωρφηρ, θηηρζηηωγην θηη-
θηηενερ, έρκρωφορδακαν κ θρωκιτορωγην ζηηωνερ,
ηηζηηξη θηηε θωρωφενεροι θηηωκατωπονεροι ζηημηκαν
φοηητορ φηηωκακαν θηηηκακανηηηθηηε θηηε:

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. Գ. (Եջ 19). — «Հասարակութեան ընդհանուր սեփեկանութիւն ղարձնել աշխատանքի, արդիւնագործութեան միջցները. — Խոլոյ, հանեները, զորդարանները, հաղորդակցութեան եւ փոխարութեան միջցները եւալին, — բովանդակ տեսնութիւնը կազմակերպել համարաբար:

807. 7.— Կոլխոզներու համայնական ձեռնարկները և համագործակցական ընկերութիւնները՝ անասուններով, գոյցերով ելն. կը կազմեն կոլխոզներու և համագործակցութիւններու ընդհանուր ընկերութական սեփականութիւն։ Կոլխոզի իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի անձնական օգտագործման համար փոքրիկ հողամասի մը, որ կից է իր տան, ինչպէս նաև անասուններու, թռչուններու ելն։

Ծանօթ.—Մր. Հ. Յ. Պ. (էջ 22).— «Հոգերի համայնացում։ Հողը կը դադրի մասնաւոր սեփականութիւն եւ վաճառքի հիւր ըլլայէ»:

(§ 17).— « Պորձարանի բանութերը եւ գիւղական աշխարհը կը ձգտին կազմակերպութիւն իւ իրազործել զորձակցութիւններու միջոցով համայնքական սեփականատիրութեան եւ տնտեսութեան բանի մը ձեւեցրու: »

30Դ. 8.— Հողը, զոր կը մշակեն կոլխոզները, կը տրուի անոնց օգտագործման համար անսահման ժամանակակից պահպան:

Ծանօթ.— Եր. 4. 8. Պ. (Էջ 22). — «Հողին օքտուելու իրաւունքը կը պատկանի աշխատառութերուն»:

ՅՈՒ. 9.— Ըսկերպարական կարգին քով՝ օրէնքը կընդունի գիւղացիներու մանր մասնաւոր տընտեսութիւնները, ինչպէս նաև արհեստաւորներու՝ որ կ'աշխատին իրենց տուներուն մէջ,— հիմնուած անձնական աշխատանքի վրայ և ուրիշ աշխատանքի շահագործութիւնը:

Ծանօթ.— Ծ. Հ. Յ. Գ. (Էջ 22):— «Խւրաքանչիւր աշխատաւոր իրաւունք ունի այն չափով նոր մշակելու, որ կարենայ առանց ուրիշի աշխատանքի ասիագրութելու, զոհացնել իր եւ իր լնտանիքին ըսպառողական պահանջներ»:

307. 10 — Օրենքով պաշտպանուած են քաղաքացիներ անհատական սեփականութեան, իրենց եկամուտը ներուն, խնայողութեան, տան, տնտեսութեան, տնային և անձնական գործածութեան և յարմարութեան առարկաներու իրաւունքը:

Ծանօթ. — **Մր. Հ. Յ. Գ.** (Էշ 6). — «Մասնաւոր սեփականութեան սկզբունքը հիմնակար է բնելյալին անհաւասարութեան»:

30Դ. 11.— Խորհրդային Միութեան տնտեսական
կեանքը ծնունդ կ'առնէ պետական ծրագրի համաձայն,
նպատակ ունենալով հանրային սեփականութեան յա-
ւելումը, անընդհատ բարձրացումը աշխատաւորներու
նիւթական և մշակութային մակարդակի և Խորհրդային
Միութեան անկախութեան և պաշտպանութեան յաւե-
լումը:

Ծանօթ. — Dr. Հ. Յ. Պ. (էջ 8). — «Ծերիմիւ մասնաւոր տեսքութեան սիստեմին եւ զորդարաններու տեսլոց մրցակցութեան» դրամա-

սետական արդիւնագործութիւնը անկարող է հաւասարականութիւն պանել ինդրանին և մատուցումին միջեւ, առիջ առաջ կուզայ արդիւնագործական անհիմանութիւն, տագնապներ, անգործութիւն:

(Էջ 22).— Կենդրունական է ուշանային վարչութիւններուն կը վերապահուի իրաւունք պարբերական հոգաբաժնումներու միջոցով իրագործել նոգերու միջերանային է միջիամայնական հաւասարացումը:

ԸՆԴ. 12.— Խորհրդային Միութեան մէջ աշխատանքը պարտականութիւնն է աշխատանքի ընդունակ իւրաքանչիւր քաղաքացիի, համաձայն այն սկզբունքին, թէ՝ «ով չաշխատիր չուտեր», Խորհրդային Միութեան մէջ կը կիրարկուի հետեւեալ ընկերութական սկզբունքը, «իւրաքանչիւրին ըստ իր ընդունակութեանց, իւրաքանչիւրին՝ ըստ իր աշխատանքին»:

Ծանօթ.— Ծր. Հ. Յ. Գ. (Էջ 24).— «Աքսատանի օրէնսդրական ապահովումը»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ Ա. ԳԼԽԻ

Ասկէ 46 տարի առաջ Դաշնակցութիւնը իր ընկերական տեսութիւնները, կազմը և տնտեսական պահանջները և սրանց կազմակերպումը հասկացած է վերոյիշեալ մէջբերումների համաձայն:

Համեմատեցի այդ մէջբերումները 46 տարի վերջը բոլենիկ առաջնորդ Ստալինի նախագծին հետ, և ակամայ պիտի նկատէք համարեա նոյնութիւնը անոնց հիմունների։ Ակամայ պիտի մտածէք թէ մէկը միւսէն առնուած է, բայց սխալ պիտի ըլլար այդպէս բացատրելը, նոյնութեան հիմնական պատճառը փորձն ու իրական կետնքն է, որ տարբեր ժամանակների և տարբեր կուսակցութիւնների ծրագրները և հիմնական նրապատակները կը նոյնացնեն։ Նոյնանման պատճառնե-

րը,— Նոյնանման եզրակացութեան բերած են:

Մեր հակառակորդ բոլշևիկները, եթէ ուշագրութեամբ կարգան վերև յիշուած մեր ծրագրի կէտերը, պիտի ակամայ խոստովանին, որ իրական եկած են Դաշնակցութեան տեսակետին՝ ընկերային կազմի 1—12 յօդուծների վերաբերմամբ, բանի որ Դաշնակցութիւնը իր ծրագրով աւելի հին է քան իրենք։

Եւ Դաշնակցականներն էլ ակամայ պիտի խոստովանին, որ Ստալինի առաջադրած 1—12 կէտերը իրենց սեփական հիմնական սկզբունքներն են, որոնք 46 տարի է որդեգրուած են իրենց ծրագրի մէջ, ապա ուրեմն այդ 1—12 կէտերը չեն կարող հակառակութեան և թշնամութեան հիմնական պատճառներ դառնալ:

Այստեղ Դաշնակցութիւնը միայն Յրդ յօդուածի մասին կարող է ունենալ տարակարծութիւն, եթէ այդ յօդուածով Ստալինի նախագծը կը հասկանայ շարունակել բանուորական և գիւղացիական պատգամաւորների գիկտատուրան։ Դաշնակցութիւնը գէմ է ամէն գիկտատուրայի սկզբունքին և կողմէ ընդհանուր ներկայացուցչութեան ձերին, թէպէտ ան կողմնակից և պաշտպան է միմարտն աշխատաւոր գիւղացիութեան, բանուորութեան և յեղափոխական մտաւորականութեան։ Նա հասկանալի կը համարէ այդ երեք տարրերի, գիրիշանութիւնը իրը մեծամասնութիւն, առանց գիկտատուրայի ձերի կիրառման և առանց որեէ մէկի իրաւունքների սահմանափակման, պարտադրելով գործառանութիւն կազմող շահագործողներին ենթարկուելու մեծամասնութիւն կազմող աշխատաւորութեան։

Նկատի առնելով մեր ծրագրէն մէջբերուած տրամադրութիւնները, մենք ուրախ պիտի ըլլայինք, եթէ Ստալիննեան նախագծի յօդ. 1—12 հիմնական կէտերը

ոչ միայն որդեգրուելին բոլշևիկների կողմէ, այլ և ի-
քագործուելին, թէկուզ այդ իրագործումը կատարուեր ոչ
թէ մեր, այլ իրենց ձեռքով։ Էականը մեր գաղափաների
երագործումն է և ոչ թէ իրագործման միջնորդ ձեռքը։
Մեր կուսակցութիւնը հպարտ պիտի ըլլայ, որ ունի
հիմնական տեսակետներու որ չեն հնացած, ընդհակառա-
կը “նոր” համարուած կուսակցութիւններն ին որ աջ ու
ձախ կը տատանին, կը փորձեն և ի վերջոյ տարուբեր-
ուելով կը յանդին այն ճշճարտութեանց, որոնք մեր
կուսակցութիւնը արդէն կէս դար է որմանած և դասած է։

Այսօր երբ Ստալինները միլիոնաւոր զոհեր տալէ
վերջը ի խնդիր ընկերային կաւոլցի որոնման, չեն գտած
մեզմէ ձախ հասկացողութեանց մէջ նպատակայարմա-
րութիւններ, մենք հաւատով և համոզումով պիտի կա-
րողանանք պնդել, որ մեր ծրագրին ձախ հասկացողու-
թիւնները անհիմն և սխալ են։

Այսօր երբ աջ հասկացողութեան հոսանքները ի-
րենց գաղափարապաշտութեամբ մեռած են և կամ մոռ-
նելու գտանդի տակ են, — մենք հաւատով և համոզու-
մով պիտի կարողանանք պնդել, որ մեզմէ աջ հասկացո-
ղութիւնները հիմէն խախտուած են և սխալ։

Այսօր հիմոնքներով մենք ընկերային ասպարեզին
մէջ ոչ ֆաշիզմէն, ոչ բոլշևիզմէն դաս առնելու, օրինակ
վերցնելու հարկադրանքին տակ պիտի չլինենք և ընդ-
հակառակը թող մեր պարզ և հակերծ ծրագիրը դասա-
տու դառնայ այլոց։ — **Մենք** պիտի ասենք — «մենք կանք
գաղափարով եւ կը մնանք»։

Այժմ անցնենք Ոտալինեան սահմանադրութեան **II**
դլիսին, որ բազկացած է 13—29 յօդուածներից։

(103)

ԳԼՈՒԽ 11


ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ՅՕԴ. 13. — Խորհրդային Հնկերվարական Հանրա-
պետութիւններու Միութիւնը կը ներկայացնէ կամաւոր
համաձայնութեան և իրաւունքներու հաւասարութեան
վրայ հաստատուած միութիւնը հետեւեալ ընկերվա-
րական խորհրդային հանրապետութիւններու։ — Ռու-
սաստանի Հնկերվարական Դաշնակցային Խորհրդային
Հանրապետութիւն, Ռէկրայնա, Պելոուսիա, Ամրբէջան,
Վլրաստան, Հայաստան, Թուրքմենիա, Ռւզբէկիա, Տաջի-
կիստան, Քաջարաստան և Կիրգիզիա։

Ծանօթ. — Ծ. Զ. Գ. (էջ 17). — «Աշխատաւորական կրտսակ-
ցուրինները կը պատրաստուին ձեռլ ձգել բաղամական դիմք, որպէս
զի ստեղծեն նախաւուր պայմաններ իրենց ընկերվար իշեալին իրա-
գործման համար, ուամկալարացնել ամենալայն համեմատութեամբ բա-
ղամական կազմակերպութիւնը, վերանել պետութիւնները դաշնակցա-
լին ռամկալար անկախ հանրապետութիւններու, ապակենրոնացման
ամեննեն ընդարձակ հիմներու վրայ։

ՅՕԴ. 14. — Խորհրդային Միութիւնը իրաւասու և
լիազօր է՝

Ա. Ներկայացուցիչ հանդիսանալ միջազգային յա-
րաբերութիւններու մէջ, վաւերացնել ուրիշ պետութիւն-
ներու հետ կնքուած դաշնագիրները։



թ. ՎՃՈՒԼ պատերազմի և խաղաղութեան խնդիրները.

Դ. Արտօնել նոր հանրապետութիւններու մուտքը Միութեան կազմին մէջ.

Ե. Հոկել Սահմանադրութեան գործադրութեան վրայ. երաշխաւորել՝ որ առանձին հանրապետութիւններու սահմանադրութիւնները համաձայն Են Խորհրդային Միութեան սահմանադրութեան. վաւերացնել սահմաններու փոփոխութիւնը առանձին հանրապետութիւններու միջև.

Ե. Կազմակերպ Խորհրդային Միութեան պաշտպանութիւնը եւ ղեկավարել անոր բոլոր զինուած ոյժերը.

Զ. Վարել արտաքին առեւտուրը, պետական մենաշնորհի հիման վրայ.

Է. Ապահովել պետութիւնը ամէն վտանգի դէմ.

Ը. Հաստատել Խոր. Միութեան տնտեսական ծրագիրները.

Թ. Հաստատել միակ պիւտճէ, գանձել տուրքերը առանձին հանրապետութիւններու մէջ և տեղական տուրքերը.

Ժ. Ղեկավարել դրամատունները, ճարտարարուեստային, երկրագործական եւ առեւտրական ձեռնարկութիւնները, որոնք շահեկանութիւն ունին տմբողջ Միութեան համար.

ԺԱ. Ղեկավարել փոխադրական միջոցները և անթել շեռագիրը.

ԺԲ. Ղեկավարել դրամական համագրոյթը եւ վարկը.

ԺԳ. Կազմակերպել ստացուածքի պետական ապահովութիւնը.

ԺԴ. Կնքել և ընել փոխառութիւններ.

ԺԵ. Հաստատել հիմնական սկզբունքները հողի, հանքերու, անտառներու եւ ջուրերու օգտագործման.

ԺԶ. Հաստատել հիմնական սկզբունքները ժողովրդական կրթութեան և առողջապահութեան.

ԺԷ. Հաստատել ժողովրդական տնտեսութեան վեճակագրութեան միօրինակ եղանակ.

ԺԸ. Հաստատել աշխատանքի օրէնսդրական սկզբունքները.

ԺԹ. Օրէնսդրութիւն դատավարութեան վերաբերմամբ. քրէտական եւ քաղաքացիական օրինագիրը.

Ի. Քաղաքացիութեան և օտարականներու իրաւունքներու վերաբերող օրէնսդրութիւն.

ԽԱ. Ներման չնորհագիրներ ամբողջ Միութեան վերաբերող:

ԾԲ. (Էջ 16 եւ 15). Էջ 16. Փափաթելով նանդիրձ ոչնչացնել բոլոր սահմաններն ու խորութիւնները ազգերու միջն, ձգտելով նանդիրձ կազմակերպել մէկ, ներգանակ, ամբողջական մարդկութիւն մը, այսուուն կուր-կուր բաժան բաժան ու նակարատ աշխարհին տեղ, — ընկերվարութեան իրազործումը չի պահանջէր արդի ուրոյն ազգային միուրեանց խափառ ծուլումը, միուրիւններ որոնք իրենց պատմականութեն ժառանգած բեղմնաւոր մասնայակութիւններով կարող են միայն նոխացնել ապազայ ընկերվար մարդկութիւնը:

Էջ 15.— Դասակարգային պայքարը կը բարդանայ մասնաւորապէս այն երկիրներու մէջ, ուր գերիշխող ազգութեան ներկայացրուցիները, իրենց ծեռէին առնելով պիտական եւ ընկերային բոլոր հաստատութիւնները, կը նեւեն տիկար ազգերը եւ առնասարակ փորամասնութիւն կազմող միուրիւնները:

ՅՈՒ. 15.— Խորհրդային Միութեան վեհապետութիւնը ուրիշ սահման չունի, բացի յօդուած 14-ի մէջ յիշատակուածներէն։ Այդ սահմաններէն գուրս իրաքանչիւր խորհրդային հանրապետութիւն կիրագործէ պետական իշխանութիւնը բոլորովին անկախ։ Խորհր-

գային հանրապետութիւնը կը պաշտպանէ առանձին հանրապետութիւններու վեհապետական իրաւունքները:

Ծան. Խ. Յ. Գ. (Էջ 15).— Զեկուելով ընկերային եւ պետական կեանի գործօն մասնակցութեան ննարաւորութենին, տուժելով թէ՛ նիւթապէս եւ թէ՛ մասկութապէս, այդ տկար միութիւնները եւ կը մնան յառաջիմութեան նամբուն վրայ եւ այդպէսով կը դանդաղի համամարդկային զարգացման հետ՝ աշխատաւորին թնկերվարական ազատագրումը, բանի որ այդպէսով խոչնդո՞ս կը դրուի, մէկ կողմէն՝ դասակարգային հակամարտութեան զարգացումին, ննուած ազգութիւններու մէջ, միւս կողմէն՝ ննուող ազգերուն պատկանող աշխատաւոր դասակարգերուն համերաշխութեանը:

ՅՈՒ. 16.— Միութեան իւրաքանչիւր հանրապետութիւնը ունի իր սահմանադրութիւնը, համաձայն իր առանձնայատկութեանց և կատարելապէս համապատասխան Խորհրդ. Միութեան ընդհ. Սահմանադրութեան:

Ծան. Ծ. Յ. Գ. (Էջ 16).— Փոքրիկ նուանուած մասկութային միութիւններու մէջ աշխատաւոր տարրերը պայմանական նանդերձ իրենց ցեղակից բարենի դասուն դէմ, միւնինյն ատեն նախանձախնդիր են իրենց ուրոյն ազգային մասկոյրին, որ ստեղծուած է ժողովրդական առանձնայատուկ նոգերանութեամբ մը:

ՅՈՒ. 17.— Միութեան իւրաքանչիւր հանրապետութեան իրաւունք կը տրուի ազատորէն դուրս գալու Խ. Միութենէն:

ՅՈՒ. 18.— Առանձին համրապետութիւններու երկարային սահմանները չեմ կը մար փոխուիլ առանց իրենց համաձայնութեամբ:

ՅՈՒ. 19.— Խորհրդային Միութեան օրէնքները հաւասար զօրութիւն ունին բոլոր խորհ. հանրապետութիւններու մէջ:

ՅՈՒ. 20.— Առանձին հանրապետութիւններէն ու և մէկուն և Խ. Միութեան օրէնքներուն միջև տարբե-

րութիւն եղած պարագային ի զօրու և Խ. Միութեան օրէնքը:

ՅՈՒ. 21. — Խ. Միութեան բոլոր քաղաքացիներուն համար կը կազմուի ընդհանուր միակ քաղաքացիական կանոնագրութիւն: Ունէ համրապետութեամ իւրաքանչիւր քաղաքացի կը համիսամայ նորիրդ. Միութեամ քաղաքացի:

Ծ. Էջ 21. Ազատութիւն տեղափոխութեան: Խափանում անցարելու:

ՅՈՒ. 22.— Ուստակամ նորիրդային Դաշմակցային Հթկերվ. համրապետութեամ մէջ կը մտմեմ. — Ազով-Սևանի ծովեան, Հեռաւոր-Արեւելեան, Սիպերիայի, Գորկիի, Արևմտեան, Խվանովիի, Կալինինի, Լենինկրատի, Մոսկուայի, Օմսկի, Օրենպուրգի, Սարատովի, Սվերլովսկի, Հիւսիսային Ստալինկրատի, Զելինապենսկի, Եակուլաւի շրջամմերը: Թաթարական, Բաշկիրեան, Դաղստաննեան, Բուրիաթ-մոնկուական, Կարարտին-բալկարական, Կալմկեան, Կարելեան, Կոմի, Խրիմ, Մարիյսկի, Մոլտովսկի, Վոլգա-Դերմանական, Հիւսիսային Օսէթիայի, Ուտմուրասկի, Ջեչն-ինգուշական, Չուվաշական, Եակութական իթքավարութիւնները: Ատիգեյեական, Հրէական-Կարաչեւեան, Օյրոթական, Խաբասեան և Զէրեզեան ինքնափար շրջանները:

ՅՈՒ. 23.— Ուկրայնական Խորհրդային Ընկերվարական հանրապետութեան մէջ կը մտնեն Վինիցկի, Դընեպրոպետուփսկի, Դոնի, Կիևի, Օտեսայի, Խարկովի եւ Զենեկովկի շրջանները և Մոլտավսկի ինքնավար խորհրդային ընկերվարական հանրապետութիւնները:

ՅՈՒ. 24.— Ատրբէչամի խորհրդային համրապետութեամ մէջ կը մտնեն Նախիչենամեամ խորհրդային ընկերվարական հանրապետութիւնը և Լեռմային Ղարաբաղի ինքնափար շրջանը:

ՆԱԽ. ՆՐ. Հ. 3. Դ. (Էջ 20).— Հայաստանի սահմաններուն մէջ պիտի միանան ռուսանալիքան նողերը:

ՅՈՒ. 25.— Վրաստամի խորհրդ. Բամբապետութեամ մէջ կը մտմեմ Արխագեամ խորհրդ. ընկերվարական հանր. և Հարաւ. Օսետեամ ինքնավար շրջանը:

ՅՈՒ. 26.— Ուզբէքստամի խորհրդային ըմկերվարակամ Բամբապետութեամ մէջ կը մտնէ Կարա-Կալպաքեան հանրապետութիւնը:

ՅՈՒ. 27.— Տաճիկստամի խորհրդ. ընկերվ. Հանրապետութեան մէջ կը մտնէ Կորտոն Բագաշխաննեան ինքնավար շրջանը:

ՅՈՒ. 28.— Կազակստամի Խորհրդային ընկերվարական Հանրապետութեան մէջ կը մտնեն Աքտիւզինըսկի, Ալմա-Աթինսկի, Արևելեան Կազակստանի, Կարգանտենսկի և Հարւ. Կազակստանի շրջանները:

ՅՈՒ. 29.— Հայաստամի, Բելոռուսիայի, Թուրքմենիստամի և Կիրկիվայի Խորհրդային ընկերվարական Հանրապետութիւնները իրենց կազմին մէջ չուժին իմքամվար Բամբապետութիւնները, ինչպէս և ծայրամասեր:

ԾԱՅՈՒ.՝ ՆՐ. Հ. 3. Դ. (Էջ 20).— «Հայաստանը պիտի ըլլայ ժողովրդավար, անկախ հանրապետութիւն, որուն սահմաններուն մէջ պիտի միանան նախկին Ռուսանալիքան եւ Թրքանալիքան նողերը: Միացաւ եւ անկախ Հայաստանի ժողովրդավար հանրապետութեան նիմնական օրենքները պիտի որոշուին Հայաստանի Սահմանադր ժողովին կողմէ ընտրուած բնդիանուր, հաւասար, ուղղակի, զարգնի, համեմատական ընտրութեան սկզբունք:

ԵԳՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԼԽԻ

ՄԵԿ ուրախութեամբ զիտեցինք, որ Ստալինեան նախագիծը իր Ա. գլխով, ընկերային կազմով, եկած է մի եղբակացութեան, որ տարբեր չէ մեր հիմնական նըպատակներից: Այդ նոյն ուրախութիւնը չունինք անոր Ք. գլխի վերաբերմամբ: Ստալինեան նախագիծը կը տարուբերուի Մարքսեան, ապազգայնական տեսակետի եւ ազգայնական Հասկացութեանց մէջ, առանց մէկն ու մէկը հաստատուն հիմունք առնելու:

Յառաջադիմութիւն պիտի նկատել այն, որ Ստալինը ազգային ազգակի գոյութիւնը ժխտել չուզեր, ինչպէս կը ժխտէին առաջ, համարելով այդ Հակայեղափոխական նախապաշտրմունք, բայց չխժտելը բաւ չէ, պէտք էր ազգային բաղաքականութիւնը իբր վարքագիծը ունենալ՝ թէ ազգային Հարցը լուծելու և թէ ընկերվարական նպատակները իրագործելու համար, ինչպէս հասկացած է Դաշնակցութիւնը, որ պարզ է անոր ծրագրի 17, 16, 15, 20, 21 էջերի մէջբերումը ներից:

Յօդուած 13ը կարդալով, անհուն երջանկութիւն պիտի զգային Ռուսաստանի 11 ազգութիւնները, որ առանց արէւնահեղութեան՝ իրանք կը ձանաշուին իբր անհատականութիւններ, իբր անկախ Հանրապետութիւններ, ինչ որ լիովին Հայապատասխան է Դաշնակցութեան գաղափարապաշտութեան (տես էջ 17): Այս յօդուածով Ստալին կանգնած է ձիշդ ու ձիշդ ազգային ըմբռնողութեան վրայ, որի գէմ ոչ մի առարկութիւն չի կարող լինել: Բայց անմիջապէս յաջորդող թիւ 14 յօդուածի հԱ. կէտերով այդ Հանրապետութիւնները,

”յդ անկախ միաւորները կ'ոչնչացնէ: Նա անունը կը թողու, բայց բովանդակութիւնը կ'առնէ, որին հակառակ է Դաշնակցութեան ծրագիրը (տես ծանօթ. էջ 16 և 15):

Մեր հասկացողութեամբ մարդը մեքենայ չէ. նա ընդ ակառակը անհատականութիւն է, ստեղծողը մեքենայի: Այդ պատճառով է որ մեր գաղափարապաշտութեան հիմքը պիտի մնայ անձի ազատութիւնը, մարդը մարդուն շահագործման վերացումը և աշխատանքի շափով անոր ապրելու իրաւունքը: Ցարդ այս հասկացողութեան մէջ համաձայն չենք բոլշեկոներին և թըշնամի էինք, այսօր Սատարին կը մերժէ իր հին հասկացողութիւնը. ուրեմն թիւրիմացութիւնը վերացած է, և միասին համամատ կարող ենք լինել մարդու ազատութեան և “ով չաշխատի՝ չ'ուտերը”, “իւրաքանչիւրը ըստ իր ընդունակութեան, ըստ իր աշխատանքին գաղափարների շուրջ:

Եթէ այս հիմնական կէտի մէջ մեր տարակարծութիւնը վերանար ըստ էութեան, պիտի վերանար և ազգային հարցին մէջ, որովհետեւ եթէ մարդը մի անհատէ, ազգութիւնն էլ բաղմամիլիոն մարդկանց մի անհատկանութիւն է: Եթէ մարդը միլիորտներ անջատ բըշջիների մի ներդաշնակ համայնական կեանքէն կազմուածէ, ազգութիւնն էլ կազմուած է բազմաթիւ միատեսակ մարդկանց հաւաքածոյնէ: Ազգութիւնը մի մեծ անձնաւորութիւն է, ինչպէս մարդը մի փոքրիկ անձնաւորութիւն է:

Ինչպէս մարդու եսի շահագործումը, անոր կաշկանդումը, անոր իրաւունքների բոնաբարումը անթոյշտարելի է, առաւել ևս անթոյլատրելի է ազգութեանը անհատականութեան, աշխատանքի, իրաւունքի, ա-

զատութեան բոնաբարումը:

Ինչպէս մարդը, առաւել ևս ազգերը պիտի լինենազատ, անկաշկանդ, իրաւաբար եւ այդ միջոցով միայն մենք կը մօտենանք ընկերվար ըմբռնողութեանց իրագործմանը:

Ստալինեան սահմանադրութեան թիւ 14 յօդուածը հակայեղափոխական բուրժուական, իմպերիալիստական և ռուսական ըմբռնողութիւն է, որով կը ղեկավարուէին իրմէ առաջ ցարերը, և որով կը ղեկավարուին ներկայումը բոլոր բուրժուական, աւատական պետութիւնները:

Այդ յօդուածով ազգային բոլոր կարողութիւնները, բոլոր իրաւունքները, բոլոր ազատութիւնները կ'առնը ւին հանրապետութիւններէն և կը տրուին յօդուած ըստ ձեր անգոյ և. Միութեան, բայց ըստ էութեան յօդուած և. Միութեան մէջ մեծամասնութիւն կազմող ուուսերի:

Իրաւ, է չէ խլուած հանկախ հանրապետութիւններու մի հարստութիւնը՝ լեզուն, բայց ազգութիւն չի նշանակեր միայն մայրենի լեզու. Դա մէկն է բազմաթիւ ազգային հարստութիւններէն, բայց ոչ ամբողջը և էականը:

Ստեղծուած անկախ հանրապետութիւնները՝ պարզ լեզուազիտական հանրապետութիւններ՝ են:

Համամիտ լինել անհնար է Ստալինեան ազգային նախագծին. Նրա հիմքը բուրժուական է, որովհետեւ որդեգրած է ոչնչացման բաղաբականութիւնը ազգային բոլոր իրաւունքներին, բացի լեզուէն. այսինքն այնպէս՝ ինչպէս որ մի կապիտալիստ կամ կալուածատէր կը լիէ բոլոր իրաւունքները աշխատաւրին, բացի անոր կեանքէն:

Նա իմպերիալիստական է, որովհետեւ ազգերը կը համարուին իրաւագործկ հօտեր և իրաւունքը կը ձանչցուի միայն ուժեղին:

Նա ոռուսական է, որովհետև բոլոր իրաւունքները, եթէ ոչ ձեռվ, այլ ըստ էռութեան կը փոխանցուին առւսներին, ինչ որ պիտի պարզուի ներքեռում:

Նա հակայեղափոխական է, որովհետև շլուծելով ազգային հարցը և ճնշող ու ճնշուղ ազգեր ստեղծելով, դրանով իսկ արդեւք պիտի հանդիսանայ աշխատաւորութեան համերաշխութեան, որով նրա ներգաշնակ յառաջացման դեպի ընկերվարութիւնը (տես ծանօթ. յօդ. 15):

Մտալինեան նախագիծը իր յօդ. 14-ով բոլորովին իրաւագութիւն դարձնելէ վերջը՝ “անկախ հանրապետութիւնները”, մեղմելու համար այդ բացայաց բռնաբարումը և ծայրայեղ կեդրոնացումը, իր յօդ. 15. 16-ով իրաւունքներ տալու երեսոյթը կ'առնէ ռանկախ հանրապետութիւններին, “մնացած” պետական պաշտօնները (ֆունկցիաները) թողնելով հանրապետութիւններին և իրաւունք տալով որ անոնք ունենան իրանց սահմանադրութիւնները: Բայց իսկոյն աւելացնելով, որ այդ ազգային սահմանադրութիւնները պիտի կատարելապէս համապատասխան ըլլան Խ. Միութեան սահմանադրութեան: Եթէ կատարելապէս համապատասխան պիտի ըլլան, ինչո՞ւ համար են այդ իրաւունքները և ազգային սահմանադրութիւնները, և յետոյ որո՞նք են այդ մնացած պետական իշխանութիւնները, և առանց անոնց անունը տալու կը լիազօրուի անկախ հանրապետութիւններին — դրանք այլևս գոյութիւն չունին յօդ. 14-էն յետոյ. ուրեմն առանց պորտֆէոյի իշխանութիւն կը տրուի, որ կատակերգութիւն է:

Այդ կատակերգութիւնը աւելի գաւեշտական բընոթ կ'առնէ իր յօդ. 17-ով, ուր անկախ հանրապետութիւններին իրաւունք կը տրուի նոյնիսկ բաժանուելու Խ. Միութենէն. մի իրաւունք որ ոչ մի գաշնակցային պետութիւնը կը լինել Տեղական կոյութեան ընդդիմանալ և ցանկութիւն ունենալ անոնց պահնջներին բաւարարել —

թիւն չունի: Յօդ. 14-ի ժլատութեան կողքին՝ յօդ. 17-ի այդ առաւածեռնութիւնը թէ՛ ծիծաղելի է եւ թէ հասկանալի:

Մի պետութիւն իրական անկախ լինելու և բաժանուելու կամք ունենալու համար, նախ և առաջ նա պիտի գոյութիւն ունենայ, եւ ոյժ ու իշխանութիւն: Յօդ. 14, 15, 16-ով և հետագայ յօդուածների տրամադրութեամբ անուանական և ոչ իրական անկախ պետութիւններ կան, և քանի որ անոնք չունին եւ ոչ մի իշխանութիւն և ոյժ, ապա և անոնց “կամովին միանալու և կամովին բաժանուելու” յօդուածները անիմաստ կը մնան, նման այն իրաւունքին, որ դադաղի մէջ դրուած դիմակին ազատութիւն կը տրուի դագաղէն հեռանալու, որ անիրագործելի է:

Յօդ. 22—29ը կը ներկայացնէ ցանկը Խ. Միութեան 11 «անկախ հանրապետութեանց», 22 ինքնազար հանրապետութեանց և 9 ինքնազար շրջանների:

Առաջին հայեցքով մի ուրախալի երեսոյթ. «անբաժան և սրբազն Ռուսիոյ» մէջ, որ Պապետոնոսցւներ և Ստալիպիններ չեին ուզեր տեսնել և ոչ մի ազգութիւն, Ստալին վերջապէս տեսած է 42 ազգութիւն, որոնց պարգևած է «անկախութիւն» եւ «ինքնազարութիւն», նայած ազգերի թուին: Մակերեսային մի ակնարկ պատճառ պիտի գառնար Ստալինին համարելու Ռուսիոյ ազգերի ազատարարը: Բայց ցաւօք սրտի ան գեռ հեռու է Ռուսիոյ Վիլհելմ Տեղը լինելուց:

Կոյր չլինել և տեսնել ազգերի գոյութեան փաստը՝ արժանիք է, որ ունի Ստալին:

Ազգերի բնական գոյութեան ընդդիմանալ և ցանկութիւն ունենալ անոնց պահնջներին բաւարարել —

իմաստութիւն է, որ կարծես կը պակսի Ստալինի:

Այդ ցանկութիւնը խօսք թողնելը և գրականօրէն չգործադրելը, գիտակցական չարիք է թէ՛ պետութեան և թէ՛ ընկերվարութեան յաջողութեան համար, որ աւելի մեծ գիրականութիւն ստեղծելու նախերգանք կարող է դառնալ, որի յանցանքի մէջն է Ստալինը եւ իր նախագիծը:

Ինչո՞ւ համար և ի՞նչ դրդապատճառներով ստեղծուած են 42 ազգային անկախ և ինքնավար ազգութիւններու հանրապետութիւններ:

Եթէ առաջնորդող գաղափարը եղած է «ազգերի իշխնորոշման սկզբունքը անկախ իրանց թուէն և որակէն, համաձայն իրանց համախումբ գոյութեան իր մեծամասնութիւն մի երկրամասի մէջ, որտեղ միատեսակ ցեղի ազգը իրարու հետ ընդհանուր սահման ունի» և այն, այդ պարագային գործնական դրութեան մէջ պիտի կիրառուեին հետեւեալները.

Ա) ինքնորոշուած ազգերը պիտի ունենային իրանց իշխանութիւնները, չասենք գերիշխանութիւնը, որ տեսանք թէ չունին ըստ յօդ. 14, 15, 16-ի:

Բ) Ազգերի ինքնորոշումը պիտի կատարուի ըստ իրանց՝ ազգութիւնների և ոչ թէ անհատների կամայականութիւնով, և ամենացաւոտ ու վտանգաւոր կողմն է ազգերին մասնատել տարբեր մասերի, հակառակ ազգութեանց կամքին, որ պատճառ պիտի դառնայ երկպառակութեանց:

Ստալինեան նախագիծը պետական սահմանների մասին զերծ չէ ակնբախ անարդարութիւններէ և «բաժանեա զի տիրեսցեանքի քաղաքականութիւն է:

Յոյց տալու համար այդ անարդարութիւնները, բերենք մի երկու օրինակ.

Յոդ. 22-ի մէջ կայ նախատեսուած «Հիւսիսային Օսետիային ինքնավար հանրապետութիւն Ուուաստանի սահմանների մէջ, իսկ յօդ. 25ի մէջ «Հարաւ Օսետիայի ինքնավար շրջան՝ Վրաստանի սահմանների մէջ:

Արդ՝ օսերը որ մի ազգ են, հազարաւոր տարիներ Վրաստանի կողըն ապրած, համարեա նոյն ժողովուրդը ինչ Կովկասի բոլոր ժողովուրդները, որ հազիւ մի դար ու կէս է ծանօթաւութիւն ունին ռուսների հետ, բաժանուած են երկու կէսի, մի մասը Ռուսիոյ մէջ, մի մասը Վրաստանի: Դա նման է բոնութեամբ բաժանելուն ամուսինը կնոջից, կամ մայրը իր զաւակներից: Քանի որ օսերը առանձին ազգ են, քանի որ թէ՛ հարաւային, թէ՛ հիւսիսային Օսետիան իրարու հետ սահման ունին, պիտի նաև միանան մի ամբողջութեան մէջ, լինին անկախ, իսկ եթէ անկախ չեն լինելու այս կամ այն պատճառով, որ առարկելի է միշտ, գոնէ պիտի լինեին ինքնավար՝ միայն մի պետութեան սահմանի մէջ, և այդ պետութիւնը աւելի լինելու իրաւունքը պիտի ունենար Վրաստանը, քան Ռուսաստանը. Քանի որ օսերի պատմութիւնը, մշակոյթը կապուած են աւելի Վրաստանին, քան Ռուսաստանին:

Մի այլ օրինակ.

Յօդ. 24-ի մէջ Ասրբէջանի հանրապետութեան մէջ ստեղծուած է Ղարաբաղի ինքնավար շրջան: Ղարաբաղ ազգ գոյութիւն չունի, կայ Ղարաբաղի շրջան, որ զուտ հայաբնակ է և Հայաստանի գաւառներէն մէկն է և անոր սահմանակից: Արդ՝ քանի որ Հայաստան կայ, պէտք էր այդ հայկական գաւառը կցուեր Հայաստանի:

Այսպիսի օրինակների շարանը պիտի երկարէր. բաւ-

Են դրանք ևս՝ ցոյց տալու, որ միայն ազգերի ինքնուրոշման գաղափարը չէ դրդապատճառը 42 աղջութեանց սահմանաւորման, այլ խառնուած է աշխարհակալական եւ բաժանման քաղաքականութեան հետոր յատուկ է ամէն մի կապիտալիստական և իմպերիալիստական գաղափարապաշտութեան։ Ուստական իմպերիալիզմը, իվան Ա.Հ.Կ.ի ոգին կը շարունակէ գործել Աստալինի նախագծի միջոցով։ Այս հասկանալու համար պիտի նայինք քարտեզին եւ պիտի տեսնենք հետևալները։

Ֆինլանտիայի գէմ յանդիման կազմած է Կոռելիան, որ ցեղակից են ֆիններին, — Լեհաստանի մէջ գտնուող բազմամիւնոն ուկրայնացիների և ձերմակ ուսւերի հանդիպակաց — կազմած է ձերմակ Ռուսիոյ և Ուկրայնայի հանրապետութիւնները, իսկ Ռումանիոյ մոլտաւների զիմաց — Ուկրայնայի մէջ «Մոլտաւիոյ հանրապետութիւնը»։

Իրանի Ա.արպատականի գէմ կազմած է Ասրբէջանը և իրանի Թուրքմենտրնակ Մազանդարանի և Մեշէտի գէմը՝ կազմած է Թուրքմենական հանրապետութիւնը, Աւղանստանի սահմանի վրայ՝ Տաճիկստանի հանրապետութիւն, իսկ Զինական Թուրքեստանի գէմ — կազմակըստան, Կրկիզստան, Մոնղոլիա, որոնք ցեղակից են չինական հանդիպակաց շրջանների ազգաբնակչութեանց։

Այս դասաւորումները չունին միայն նպատակ ազգերի ինքնորոշման, այլ ունին աւելի էական մի նպատակ եւս, ազգերի ինքնորոշման ցուցանակը ծառայեցնել աշխարհակալութեան միջոց, ծառայեցնել միջոց շրջապատող պետութիւնները ներսէն պայմանական Ուկրայնայով, ձերմակ Ռուսիով Լեհաստանով, Ա.արքէջանով, Թուրքմէնստանով իրանը, Տաճիկստանով Աւղա-

նըստան, Կաղակստանով, Ղրղզստանով, Մոնղոլիայով — չինական տիրապետութիւնը ևայլն։ Սա մի նոր մեթոս է, և իմաստուն մեթոս, տարածուելու և պաշտպանուելու, որ գուցէ աւելի հիմնական և վճռական միջոցէ, քան Ակոբելովների, Երմոլավների ուղղաձիգ միջոցները աշխարհակալութեան։ Հնացած են հին մեթոսները ազգութիւնները անբան հօտեր համարելու, նոր մեթոս է պէտք — ազգերին երկութական շահեր ցուցադրել և զանոնք դարձնել առաջապահ ոյժ, դրսի ոյժերը կազմակերպելու և տիրապետելու համար։

Մեթոսը խելացի է, բայց հիմնուած է ոչ հաստատուուն գետնի վրայ։ Ազգերը երկութական շահերով միան չեն կարող կամուրջ ծառայել նոր ձեփի իմպերիալիզմին, պիտի տալ անոնց զրական, շօշափելի շահ և այդ իրական կը դառնայ և գործակցութիւնը հիմնական, երբ այդ ազգերը լինեն իրանք անկախ եւ դաշնակցած իրարու հետ համաշաւասար շահ ստանալու համար։ Այդ չկայ, և այդ պատճառով իմաստուն ուղին իսկ պիտի քամուն հետ գնայ, քանի կը շարունակուի ձնչող և ձնչուող, իրաւատէր և իրաւագուրէ ազգային քաղաքականութեան ձերը ըստ Ստալինեան սահմանադրութեան։

Իթէ եգրակացնենք Բ. Գլւիի բովանդակութիւնը. պիտի տեսնենք, որ խարուսիկ է և. Միութեան Ֆետերասիոնը և անուանապէս կը ձանաչուի ազգերի անկախութիւնը, բայց իրաւապէս գոյութիւն չունին ոչ «անկախութիւններ» և ոչ ինքնավարութիւններ»։ Գոյութիւն ունի բողարկուած ուսւ գերիշխանութեան կենտրոնաձիգ վարչաձեւը։

Անցնինք Գ. Գլուխին։

Գ Լ Ո Ւ Խ III

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԸՆԿ. ՀԱՆՐ. ՄԻՌԻԹԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻ

Յօդ. 30.— Խորհրդային Միութեան պետական բարձրագոյն օրկանը կը հանդիսանայ Խորհրդային Ընկերվարական հանրապետութիւններու Միութեան Գերագոյն Խորհրդը:

Յօդ. 31.— Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդը իր ձեռքը կը կեցրոնացնէ Միութեան ամբողջ իշխանութիւնը՝ համաձայն սահմանադրութեան 14րդ յօդուածին, որքան որ այդ իշխանութիւնը ըստ սահմանադրութեան չի պատկանիր Գերագոյն Խորհրդին առջև պատասխանատու օրկաններուն— Գերագոյն Խորհրդի նախագահութիւն, Խորհրդային Միութեան ժողովրդական Գործավարներու Խորհրդ և Խորհրդային Միութեան ժողովրդական Գործավարութիւններ։

Խանօր.— Ծր. Հ. Յ. Գ. (Էջ. 16).— «Փափառելով հանդեռ ոչնչացնել սահմաններն ու խորութիւնները աղքեռու միջեւ, ձգտելով հանգընել սահմաններն ու խորութիւնները աղքեռու միջեւ, ձգտելով կազմակերպել մէկ, ներգանակ, ամբողջական մարդկութիւն մը, դեռ կազմակերպել մէկ, ներգանակ, ամբողջական մարդկութիւն մը, չի պահանջուիր արդի ուրոյն ազգային միութիւններուն ծովում»:

(Էջ 15).— Անզեր նախանձախնդիր իւն իւրոյն ուրոյն ազգային մասնակին, որ ստեղծած է ժողովրդավար առանձնայատու նոգերանուրին մը»:

(Էջ 18).— «Խորհրդային բոլոր անջրպետները, որոնք կը ժերաւուեն ժամանակակից հասարակութիւնը, բաժնելով զայն նպատակ ու հականարդական բանակարգերու։

Յօդ. 32.— Խորհրդային Միութեան օրէմսդրական իշխանութիւնը ամբողջապէս կը պատկանի Գերագոյն Խորհրդին:

Խանօր.— Ծր. Հ. Յ. Գ. (Էջ 18).— «Արամկավարացնել ամենալայն համեմատութեամբ բաղամական կազմակերպութիւնը, վերածել պետքական դատավական—ուամկավար անկախ հանրապետութիւններու, ապակենտոնացման ամենալայն նիմերու վրայ»:

Յօդ. 33.— Գերագոյն Խորհուրդը կը բաղկանայ երկու պալատներէ— Միութեան Խորհուրդ և Ազգութիւններու Խորհուրդ։

Խանօր.— Ծր. Հ. Յ. Գ. (Էջ 16).— «Միացնել բոլոր ժողովուրդները նոյակապ դատակացութեամ մը մէջ, խոսական աշխատակցութեամ նիման վրայ»:

Յօդ. 34.— Միութեան Խորհրդը կ'ընտրուի Խորհրդային Միութեան քաղաքացիներէն, իւրաքանչիւր 300 հազար քաղաքացիէն մէկ պատգամաւորի հաշուով։

Խանօր.— Ծր. Հ. Յ. Գ. (Էջ. 16).— «Միացնել բոլոր ժողովուրդները նոյակապ դատակացութեամ մը մէջ»:

Յօդ. 35.— Ազգութիւններու Խորհրդը կը բաղկանայ պատգամաւորներէ, օրոնք կը Զամակուիմ Միութեամ համբաւպետութիւններու, ինքթավար համբաւպետութիւններու և ինքթավար շրջամներու գերագոյն խորհրդանութիւններէ, այն հաշուով, որ Միութեան իւրաքանչիւր անկան համբաւպետութիւն կուտայ ՏԱՄԻ պատգամաւոր, իւրաքանչիւր ինքթավար համբաւպետութիւմ ՀԻՆԳ և իւրաքանչիւր ինքնավար շրջան՝ ԵՐԿՈՒ պատգամաւոր։

Յօդ. 36.— Խորհրդ. Միութեան Գերագոյն Խորհրդը կ'ընտրուի ջորս տարին անգամ մը։

Յօդ. 37.— Գերագոյն Խորհրդի զոյգ պալատ

ները հաւասար են իրենց իրաւունքներով:

Յօդ. 38.— Օրէնսդրական նախաձեռնութիւնը հաւասար չափով կը պատկանի Միութեան Խորհուրդին և Ազգութիւններու Խորհուրդին:

Յօդ. 39.— Օրէնքը ընդունուած կը համարուի եթէ ընդունուած է երկու պալատներէն, իրաքանչիւրին պարզ մեծամասմութեամբ:

Յօդ. 40.— Գերագոյն Խորհուրդին կողմէ ընդունուած օրէնքները կը հրապարակուին Գերագոյն Խորհուրդի նախագահի և դիւնի քարտուղարին ստորագրութեամբ:

Յօդ. 41.— Միութեան և Ազգութիւններու Խորհուրդներու նստաշրջանները կը բացուին և կը փակուին միաժամանակ:

Յօդ. 42.— Միութեան Խորհուրդը կ'ընտրէ իր նախագահը և երկու փոխնախագահները:

Յօդ. 43.— Ազգութիւններու Խորհուրդը կ'ընտրէ իր նախագահը և երկու փոխնախագահները:

Յօդ. 44.— Միութեան և Ազգութիւններու Խորհուրդներու նախագահները կը զեկավարեն իրենց պալատներու նիստերը և անոնց ներքին կարգը:

Յօդ. 45.— Երկու պալատներուն ընդհանուր նիստերու փոխնիփոխ կը նախագահնեն Միութեան և Ազգութիւններու Խորհուրդներու նախագահները:

Յօդ. 46.— Գերագոյն Խորհուրդին նստաշրջանը կը հրաւիրուի տարիի երկու ամեամ: Արտակարգ նըստաշրջանը կը հրավիրէ Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը իր նախաձեռնութեամբ կամ հանրապետութիւններէն մէկուն պահանջով:

Յօդ. 47.— Միութեան և Ազգութիւններու Խորհուրդներու միջւ տարակարծութիւն ծագած պարագային, հարցը կը տարուի իրաւարար յանձնաժաղովին:

Եթէ իրաւարար յանձնաժաղովի միջոցով համաձայնութիւն չկայանայ, կամ եթէ անոր տուած որոշումը չգոհացնէ երկու պալատները, հարցը կրկին կը բնուի պալատներու մէջ: Խոկ եթէ երկու պալատներուն միջև կրկին համաձայնութիւն չկայանայ, Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը կը լուծէ Գերագոյն Խորհուրդը և կը նշանակէ նոր ընտրութիւններ:

Յօդ. 48.— Գերագոյն Խորհուրդը երկու պալատներու ընդհանուր նիստին մէջ կ'ընտրէ Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը, որ կը բաղկանայ Գեր. Խորհուրդի նախագահութիւննէն, անոր չորս փոխնախագահներէն, նախագահութեան քարտուղարէն և նախագահութեան 31 անդամներէն: Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը պատասխանատու է Գեր. Խորհուրդին առջեւ, անոր ամբողջ գործունէութեան ընթացքն:

Յօդ. 49.— Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը՝

Ա. կը հրաւիրէ Գերագոյն Խորհուրդի նստաշրջանը:

Բ. Հրամանագիրներու միջոցով կը մեկնաբանէ գործող օրէնքները:

Գ. կը լուծէ Գերագոյն Խորհուրդը, համաձայն 47րդ յօդուածին, եւ կը նշանակէ նոր ընտրութիւններ:

Դ. կը կազմակերպէ հանրապուէ, իր նախաձեռնութեամբ կամ հանրապետութիւններէն որևէ մէկի փափառով:

Ե. կը փոխէ Խ. Միութեան գործավարմերու Խորհուրդի եւ առամծի համբաւապետութիւններու գործավար. խորհուրդներու որոշումները այն պարագային, եթէ ասոնք օրէնքին համաձայն չեն:

Զ. Գերագոյն Խորհուրդի նստաշրջաններու ընթաց-

քին կը փոխէ և կը նշանակէ ժողովրդական գործերը՝ Գործավարներու Խորհուրդի առաջարկով, ապա այդ նշանակումները կը յանձնէ Գեր. Խորհուրդի հաստատութեան:

Է. կը պարզեւատրէ Խ. Միութեան պատուանշաններով:

Ը. Կ'իրագործէ ներման իրաւունքը:

Թ. Կը նշանակէ և կը փոխէ Խ. Միութեան զինուածութերու բարձր հրամանատարութիւնը:

Ժ. Գերագոյն Խորհուրդի նստաշրջաններու գաղաքի ընթացքին պատերազմի վիճակ կը յայտարարէ՝ Խ. Միութեան վրայ յարձակման մը պարագային:

ԺԱ. Կը հոչակէ ընդհանուր կամ մասնակի զօրաշարժ.

ԺԲ. Կը հաստատէ միջազգային դաշնագիրները:

ԺԳ. Կը նշանակէ և ետ կը կանչէ օտար պետութիւններու մօտ նշանակուած Խ. Միութեան լիազօր ներկայացուցիչները:

ԺԴ. Կ'ընդունի օտար պետութիւններու դիւանագիտական ներկայացուցիչներու հաւատարմագիրները:

ՅՕԴ. 50.— Միութեան Խորհուրդը և ազգութիւններու Խորհուրդը կ'ընտրեն մանտատային յանձնաժողովներ, որոնք կը ստուգեն իւրաքանչիւր պալատի պատգամաւորներու լիազօրութիւնները: Մանտատային յանձնաժողովի առաջարկով՝ կ'որոշեն կամ ճանչնալ լիազօրութիւնները և կամ փոխել ընտրութիւնները:

ՅՕԴ. 51.— Այն պարագային երբ Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդը անշրաժեցա կը նկատէ, կը նշանակէ ըննիշ յանձնաժողովներ՝ ամէն կարդի քննութեանց համար: Բայց հաստատութիւնները եւ պաշտօնատարները պարտաւոր են պատասխանելու այդ

յանձնաժողովներու հարցումներուն և անոնց ներկայացընել պահանջուած փաստաթուղթերը:

ՅՕԴ. 52.— Խ. Միութեան Բարձրագոյն Խորհուրդի պատգամաւորը չի կրնար ոչ ձերբակալուիլ, ոչ ալ դատարանի յանձնուիլ առանց Գեր. Խորհուրդի արտօնութեան, իսկ Գեր. Խորհուրդի նստաշրջանի գաղարի ժամանակամիջոցին՝ առանց անոր նախագահութեան արտօնութեան:

ՅՕԴ. 53.— Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի լիազօրութեանց ժամանակը լրանալէ յետոյ, ինչպէս նաև այդ ժամանակէն առաջ անոր լուծուելու պարագային, Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը կը պահէ իր լիազօրութիւնը, մինչեւ նոր Գերագոյն Խորհուրդի կողմէ նոր նախագահութեան ընտրութիւնը:

ՅՕԴ. 54.— Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի լիազօրութեանց ժամանակը լրանալէ յետոյ, ինչպէս նաև ժամանակէն առաջ անոր լուծուելու պարագային, Գեր. Խորհուրդի նախագահութիւնը կը ձշդէ թուականը նոր ընտրութեանց, որ պէտք է կայանան ամենէն ուշը Գեր. Խորհուրդի աշխատանքներու գումարումէն շամբույթոյ:

ՅՕԴ. 55.— Խ. Միութեան նորընտիր Գերագոյն Խորհուրդը նախորդ Գեր. Խորհուրդի նախագահութեան կողմէ կը հրաւիրուի ոչ ուշ՝ քան ընտրութիւններէն մէկ ամիս յետոյ:

ՅՕԴ. 56.— Խորհ. Միութեան Գերագոյն Խորհուրդը երկու պալատներու միացեալ ժողովին մէջ կ'ընտըրէ Խ. Միութեան կառավարութիւնը, այսինքն ժողովրդավարներու Խորհուրդը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ԳԼԽԻ

Երրորդ գլխութը կառուցուած է Բ. զլիտու վրայ. մենք ցուցադրեցինք Բ. զլիի թերութիւնները. բնական է, որ թերի և ծուռ հիմքի վրայ կառուցուածը պիտի շարունակէ մասլ թերի և ծուռ: Այս զլիի մէջ տեղի ցայտուն կերպով կ'արտայայտուի ոռւսակ. կեզրոնաձիգ ուղղութիւնը և ազգերի իրաւունքների և գոյութեան խարուսիկ բնոյթը: Այդ ցաւալի երեւոյթի առաջն առնելու համար, Դաշնակցութեան ծրագրի տրամադրութիւնները հետեւեալներն են.

Ծանր. Ծր. Յ. Դ. (էջ 18): «Ամամկալարացնել ամենալայն համեմատութեամբ խաղական կազմակերպութիւնը, վերածել պէտութիւնները դաշնակցական-ուամկալար անկախ համեմապետութիւններու ապակենունացման ամենալայն նիմերու վրայ»:

Էջ 16. «Միացնել բոլոր ժողովներները նորակապ դաշնակթեան մը մէջ, խաղաղ աշխատակցութեան նիման վրայ»

Այս մէջբերումներէն պարզ է, որ Ստալիննեան նախագծի Գ. զլիի և Դաշնակցութեան հասկացողութեանց մէջ խոր տարբերութիւններ կան: Եթէ Ստալիննեան ծրագիրը կը ձգտի ազգային հարցի լուծման խարկանքը տալով, ստեղծել փաստօրէն Ռուսական կայսրութեան ամբողջականութիւնը և տարածականութիւնը, ընդհակառակը — Դաշնակցութիւնը մանր և մեծ ազգերի գոյութիւնը և անոնց անկախութիւնը պայման համարելով՝ կը ձգտի դաշնակցութեան միջոցով հաւասար առհաւասարի ստեղծել մի մեծ քնտանիք ազգերի: Այս տարբերութիւնները աւելի ցայտուն կը դառնան, եթէ վերլուծների տրամադրութիւնները 30—56 յօդուածների տրամադրութիւնները

Խորհրդային Միութեան, այսինքն 11 անկախ, 22

ինքնավար հանրապետութիւնների և 9 ինքնավար շրջանների օրէնսդրական ամբողջ իշխանութիւնը կը պատկանի Պերագոյն Խորհրդին: Գերագոյն Խորհրդութը կազմուած է երկու պալատէ, — Միութեան Խորհրդութէն և Ազգութեանց Խորհրդութէն: Ազգութեանց Խորհրդութը կազմուած է, ըստ յօդ. 25-ի, անկախ հանրապետութեանց 10-ական, ինքնավար հանրապետութեանց 5-ական և ինքնավար շրջանների 2-ական ներկայացուցիչներէն, իսկ Միութեան Խորհրդութը՝ իւրաքանչիւր 300,000 քաղաքացիների մէկական ներկայացուցիչներէն: Վերացեցէք այս գեղեցիկ պատմուանաւոր յօդուածները, 34, 35, իւրական թուերի և կը տեսնէք ոռւսական գերիշխան տերակալութիւնը:

Ըստ, օրինակ, 1931 թուի վիճակագրութեան, Խ. Միութեան ազգաբնակչութեան ընդհանուր թիւը եղած է 144,800,000, որմէ ոռւսական ֆետերասիսները 99, 670,000: Արդ՝ Խորհրդութների Միութիւնը կազմելու համար, իւրաքանչիւր 300,000 մի պատգամաւոր տալու պայմանով, Խ. Միութեան ընդհ. պատգամաւորներու թիւը պիտի լինէր 482, որմէ Ռուսաստանինը միայն 332 պատգամաւոր, իսկ մնացած 10 (անկախ) հանրապետութիւնները 150 պատգամաւոր միայն: Հարցերը պիտի լուծուին պարզ մեծամասնութեամբ. պարզ է, որ 10 հանրապետութիւնները, միասնաբար ունենալով 150 ձայն, չնչին փոքրամասնութեան մէջ են 482-ի գէմ և միշտ հարցերը պիտի լուծուին Ռուսիոյ 332 ձայնով: Արդ, Միութեան Խորհրդի բուն նպատակը կը գտանայ ոռւսական որոշումների հաստատումը պարտազրել 10 անկախ հանրապետութիւնների մասնակցութեամբ: Միութեան Խորհրդը վետերասիսնի, յօդ. 13-ով, լիւառատ «անկախութեանց» բաշխման սպանդանոցն է, որուեղ պիտի անկախութիւնները, ազգային ինքնութիւն-

ները ոչնչանան և տեղի տան ոռւս. բացարձակ կամ քիւ:

իրաւ է, այդ ոռւսացման հանդեպ, Միութեան Խորհուրդի գեմ կը ստեղծուի Ազգութեանց Խորհուրդը որի պատգամաւորների թիւը պիտի լինի.

Անկախ հանրապետութիւններ	$11 \times 10 = 110$
Ինքնավար	$22 \times 5 = 110$
»	$9 \times 2 = 18$
	<u>42</u> <u>238</u>

Այս կազմը, պիտի խոստովանել արդար է և չամապատասխան մեր իսկ գաղափարապաշտութեան, ան համապատասխան է ազգերի անկախութեան և իրեւ հաւասար առ հաւասարի գաշնակցութեան սկզբունքին ընդունելի է Ազգերի Խորհուրդը, բայց անոր ձեռքը ոչինչ չկա, անոր 238 պատգամաւորի դիմաց կայ 482 Միութեան Խորհրդի պալատը, որ երկուսէն երեք անգամ մեծ է թիւով, որի հետ պիտի լուծէ հարցերը և բոլոր հարցերը, որ եթէ ինքը միաձայնութեամբ իսկ լուծեր Միութեան Խորհուրդը պարզ մեծամասնութեամբ կարող է ջնջել և կամ կանգնեցնել: Եւ ահա պիտի սկսի վեճը երկու պալատների մէջ, ինչ որ պիտի պատճառ գառնայ Գերագոյն Խորհրդի ոչնչացման: Գեր. Խորհրդի երկու պալատների իրարու հետ անհամաձայնութեան գեղաքում, հարցի լուծումը վերապահուած է նոյն Գեր. Խորհրդէն ծնուած 31 հոգինոց նախագահութեան: Նախագահութիւնը կը ստանձնէ Գերագոյն Խորհրդի իրաւասութիւնները ամբողջութեամբ և կը լուծէ Գերագ. Խորհուրդը իր երկու պալատներով (յօդ. 47, 48, 49): Այս կը նշանակէ որ ձեւական կը գառնան եւ Միութիւնների Խորհուրդը, եւ Ազգերի Խորհուրդը, ասոնք կարծես եկած են լոկ ծնունդ տալու մի համեստ անուան տակ թաքնուած (նախագահութեան), որը ոչ

այլ ինչ է եթէ ոչ նախկին Պոլիտիկուոն, կամ գիւղատառը:

Այս՝ քողարկուած ֆաշիզմ է, եւ ոչ թէ գեմակատիզմ: Գույք հանդուրժելի լիներ այդ համագահութիւնը, եթէ ան բխած լիներ միմիայն 238 Ազգերի Խորհրդի պատգամաւորներից, և անկէ ծներ միայն և անկէ միայն կախում ունենար, բայց երբ գոյութիւն ունի Միութեան Խորհուրդը, կը նշանակէ, թէ արդ գիւղատառան ոչ միայն զիկտատուրա է անձերի, այլ եւ Ռուսաստանի գիւղատառան կամական ազգերի վրայ, որով շարիբը կրկնակի է:

Եթէ իրաւ է յօդ 13-ի իմաստը, որ ազգերը իբր հաւասար առ հաւասարի հետ, կամովին, իբր անկախ միաւորներ կը դաշնակցին, ապա այդ պէտք չէ որ գոյութիւն ունենայ Միութեան Խորհուրդը և բ) Պետական Գերագոյն Խորհուրդը կազմուի միմիայն Ազգերի Խորհուրդէն այն սկզբունքով որ նախատեսած է Սահմանադրութիւնը և ան է միակ գերագոյն օրէնսդիր իշխագութիւնը և ան է միակ գերագոյն օրէնսդիր իշխագութիւնը և ծնունդ տուողը վարչական իշխանութեանց:

Միայն այս միջոցով է, որ ազգերի անկախութիւնը և՛ ոռուսական և՛ այլ գերիշխանութիւնների վերացնելը կապահովի իսկ ներկայացուած սահմանադրութիւնը, իր Գ. գլխով պիտի նկատել անկախութեանց գերեզման և միապետութեան նախերգանք:

Գանք Դ. գլուխին:

Գ Լ Ո Ւ Խ Ա Վ

ԴԱՅՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ

ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՅՕԴ. 57. — Խորհրդային հանրապետութեան մէջ պետական եշխանութեան բարձրագոյն օրկան կը հանդիսանայ այդ նոյն հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը:

ՅՕԴ. 58. Իւրաքանչիւր Խորհրդային հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը կ'ընտրուի բոլոր քաղաքացիներէն չորս տարին անդամ մը: Պատգամաւորներուն թիւը կը ճշգուի և. հանրապետութեանց սահմանադրութիւններով:

ՅՕԴ. 59. Խորհրդային Հանրապետութեան Գերագոյն Խորհրդը կը հանդիսանայ անոր միակ օրէնսդիր եշխանութիւնը:

ՅՕԴ. 60. Խորհրդային հանրապետութեան Գերագոյն Խորհրդը՝

Ա. Կը հաստատէ հանրապետութեան սահմանադրութիւնը և անոր մէջ փոփոխութիւններ կը մտցնէ՝ հայածայն և. Միութեան Սահմանադրութեան 16-րդ յօդուածին:

Բ. — Կը վաւերացնէ Խորհրդային հանրապետութեան կազմին մէջ մտնող ինքնավար հանրապետութեանց սահմանադրութիւնները և կ'որոշէ անոնց երկրային սահմանները.

Գ. — Կը հաստատէ հանրապետութեան ժողովը գական տնտեսութեան և նախագահութիւնը ծրագիրը.

Դ. — Կը վայելէ ներման իրաւունք, ինչպէս նաև իրաւունք ներում շնորհելու այն քաղաքացիներուն, որոնք գատապարտուած են Խորհրդ. հանրապետութեան գատական հաստատութեանց կողմէ (տես էջ 44ի ծանօթ.ը):

ՅՕԴ. 61. — Խորհրդային հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը կ'ընտրէ նախագահութիւնը հետեւալ կազմով. — Նախագահ, փոխ նախագահներ և նախագահութեան անդամներ: Նախագահութեան իրաւունքները կ'որոշուեն տուեալ հանրապետութեան սահմանադրութեամբ:

62. — Գերագոյն Խորհուրդի աշխատանքներու ղեկավարութեան համար ան իր մէջն կ'ընտրէ նախագահ և փոխ նախագահներ:

ՅՕԴ. 63. — Խորհրդային հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը կ'ընտրէ հանրապետութեան կառավարութիւնը, այսինքն՝ ժողովուգական գործավարներու Խորհուրդը:

IV ԳԼՈՒԽԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Անկախ հանրապետութիւնների Գերագոյն Խորհրդի գլուխը, որ բաղկացած է 57—63 յօդուածներէն, լիակատար պիտի բաւարարէր ազգերի ինքնորոշման և ազատութեան տենչերին, եթէ չլինէր յօդ. 60-ի Ա.

կետի ակնարկութիւնը այդ ազատութեանց երևութաւ կան լինելու մասին:

Դաշնակցութիւնը իր ծրագրով հետևեալ ըմբռնողութիւնները ունի ազգութեանց գերիշխանութեան և Հայաստանի մասին:

Ծանօթ.— Ծր. Հ. Յ. Գ. (էջ 18).— «Համամիտ լինելով վերածել պետքիւնները դամակցական—ուամկափար անկախ համեապետութիւններու, ապահետրոնացման ամենէն ընդառակ նիմերու վրայ:

(էջ 20).— Հ. Յ. Գ. իրեւ յեղափոխական եւ ընկերվարական կուսակցութիւն, կը ձգտի պատասխանել նայ աշխատաւոր զանգուածներու բայանակ շահերը, թէ՛ տնտեսական—դամակարգային, թէ՛ մարդկային—բաղակական եւ թէ ազգային մշակուրական, նպատակ ունենալով ժողովուրդին ձեռքը տալ կառավարութեան դեկր եւ արդի կարգեր փոխարինել լայն ժողովրդապետութեամբ եւ արդիւնաբերութեան միջոցներու համայնացումով»:

«Առաջնորդուած ընկերվարական սկզբունքներէ, ձգտելով ստեղծել անկախ եւ ազատ հարեւենիք եւ նկատի ունենալով մեր բնակած վայրերու իրական եւ նախունացած պետքը, կ'առաջարկէ.

— Հայաստանը պիտի ըլլայ ժողովրդափար անկախ համեապետութիւն:

Եթէ անուշադրութեամբ կարգաք Դաշնակցութեան ծրագրի այդ հատուածը և Ստալինեան նախագծի 57—63 յօդուածները, պիտի համարեա նոյն բովանդակութիւնը գտնէք. բայց Խորապէս կը սխալիք, որովհետեւ յօդ. 60-ի մէջ խնամքով թաքնուած է մի կէտ, որ կը պարտադրէ իրագործել յօդ. 16-ը: Խսկ յօդ. 16-ը կը թելադրէ, որ ազգերի սահմանադրութիւնը պիտի կատարեալ պատճենը լինի Խորհրդային Միութեան սահմանադրութեան,— այդ պարագային ո՞րն է իմաստը հանրապետութեանց Գերագոյն Խորհուրդի ստեղծման, եթէ նա նոյնանման սահմանադրութիւն պիտի քուէարկէ յար և նման Մոսկուային:

Անիմաստ է Նման Գերագոյն Խորհուրդի գոյութիւնը, նրա գերը աւելի չէ քան տաքթիլցի մի օրիորդի, որ իսկութեամբ կարող էր արտագրել Մոսկուայի սահմանադրութիւնը և պարտադրել «անկախ հանրապետութիւններին»:

Բայց այդ չէ միայն նախագծի թերութիւնը, կայ և աւելին, որ չէ յիշատակուած IV գլխի մէջ, երեկի գիտմամբ, վաստակութիւնը մեղմելու համար: Կայ յօդ 14-ը, որը իր ԽՍ. կէտերով՝ իսպառ իրաւագործկարգածուցած է «անկախ» հանրապետութիւնների Գերագոյն Խորհուրդները: — Դա նման է նրան, որ կաթէն իւզը, պանիրը քաշելէն յետոյ Մոսկուայի կողմէն, թողնուած է լոկ շուատը և Գերագոյն Խորհուրդ կազմելով, կը պարտադրուի հանրապետութիւններին այդ շուատէն իւզ և պանիր պատրաստել: Ստալին կ'ասէ. «թողնութիւն Խորհուրդները ունենան հանրապետութիւնները». բայց ինչո՞ւ համար, երբ անոնց խօսելու նիւթ իսկ չէ թողնուած:

Այդ աչքակապուկ է.— աչքակապուկ խաղը զուարձակի է մանուկների համար, րայց քաղսքական կեանքի մէջ անոր գոյութիւնը յարատեւ չէ: — Հարցը պարզ պիտի գնել:

Ստեղծուած 11 հանրապետութիւնները անկա՞խ են թէ ոչ:

Եթէ անկախ չեն, այդ պարագային աւելորդ են ժողովրդական դրամերով Գերագոյն Խորհուրդները ըստեղծել հանրապետութեանց մէջ, Մոսկուայի սահմանադրութիւնը կրկնելու համար:

Եթէ անոնք իրօք անկախ են, այդ պարագային յօդ. 14. 15. 16-ի տրամադրութիւնները պիտի վերացուին:

Մեր հասկացողութեամբ՝ հանրապետութիւնները անկախ պիտի լինեն և պիտի ունենան իրանց Գերագոյն

Խորհուրդները, ենթակայ և պատասխանատու միմիայն
իրանց ժողովրդի առաջ և բացարձակ տէր ու տնօրէն
իրենցմէ բխած իշխանութեանց, Համաձայն իրանց կամքի
և համաձայն փոխադարձաբար համաձայնութեան եկած
Դաշնակցային խորհուրդի հետ կնքուած պայմանների:
Անցնենք V և VI գլուխներին:

ԳԼՈՒԽ

ԽՈՐՀՄԻԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ ՕՐԿԱՆՆԵՐԸ

Յօրի 64.— Խորհրդային Միութեան մէջ գործա-
դիր և վարչական բարձրագոյն օրիանը կը հանդիսա-
նայ ժողովրդ. գործավարներու խորհուրդը:

Յօրի 65.— Ժողովրդական գործավարներու Խոր-
հուրդը պատասխանատու է Խորհրդային Միութեան
Գերագոյն Խորհուրդին առջև, որուն հաշիւ կուտայ իր
գործողութեանց համար:

Յօրի 66.— Խորհրդային Միութեան գործավար-
ներու խորհուրդը որոշումներ կ'ընդունի՝ համաձայն գո-
յութիւն ունեցող օրէնքներուն, որոնց գործադրու-
թեան կը հսկէ ինք:

Յօրի 67.— Խորհրդային Միութեան գործավար-
ներու խորհուրդի որոշումները պարտադիր են ամբողջ
Խորհրդային Միութեան համար:

Յօրի 68.— Խորհրդային Միութեան գործավար-
ներու խորհուրդը՝

Ա. Կ'ուղղէ և կ'իրագործէ առանձին գործավար-
ներու աշխատանքներու կապը, ինչպէս նաև տնտեսա-
կան և կրթական ուրիշ հաստատութիւններու աշխա-
տանքը:

Բ. Զեռք կ'առնէ միջոցներ, որոնք անհրաժեշտ
են իրագործելու համար ժողովը, տնտեսութեան ծրագիւ-
րը, կիրարկելու համար կեալքի մէջ պետական պիտածէն
և ամրացնելու համար վարկային և դրամական համա-
գրոյթը:

Գ. "իջոցներ ձեռք կ'առնէ հանրային կարգի պահ-
պանման, պետական շահներու պաշտպանութեան, ինչպէս
նաև բաղաբացիններու իրաւունքներու պաշտպանութեան
համար:

Դ. Կը զեկավարէ յարաբերութիւնները օտար պե-
տութիւններու հետ:

Ե. Կը սահմանէ տարեկան քանակը այն բաղաբա-
ցիններու, որոնք ենթակայ են զինուորական ծառայու-
թեան, և կը զեկավարէ երկրի զինուած ուժերու ընդ-
հանուր կազմակերպութիւնը:

ՅՕԴ. 69.— Վարչութեան և ժողովրդական տնտե-
սութեան բոլոր մարզերուն մէջ, որոնք ենթակայ
են Խ. Միութեան իրաւասութեան, գործավարմե-
րու խորհուրդը իրաւումք ումի դադրեցմելու առաջին
համրապետութիւններու ժողովրդակամ գործավարմերու
խորհուրդներուն կողմէ ըմբումուած հրամանագիրներու
գործադրութիւնը: ԱՅ կրօայ մաս չծջել Խորհրդ. Միու-
թեան առաջին գործավարմերու հրամանագիրներն ու
կարգադրութիւնները:

Խանօր.— Եր. Հ. Յ. (էջ 20).— «Հայաստան պիտի ըլլայ
ժողովրդակամ անկախ համրապետութիւն: Եր դեկալարութեան տակ
պիտի ըլլան հայ աշխատաւոր զանգուածներու բովանդակ աները, թէ՝
տնտեսական—դասկարգային, թէ՝ մարդկային—հաղափական, թէ՝ ազգա-
յին—մշակութական»:

ՅՕԴ. 70.— Խորհրդային Միութեան գործավար-
ներու Խորհուրդը կը նշանակուի Խորհրդ. Միութեան
Գերագոյն Խորհուրդին կողմէ հետևեալ կազմով.

Ժողովրդական գործավարներու Խորհուրդին նախա-
գահ, ֆոխնախագահներ, Ծրագրային Յանձնաժողովի
նախագահ, Խորհրդային Հակագլուի Յանձնաժողովի նա-
խագահ, ժողովրդական գործավարներ, հայթայթման
կոմիտէի նախագահ, արուեստից կոմիտէի նախագահ,
բարձրագոյն կրթութեան կոմիտէի նախագահ:

ՅՕԴ. 71.— Եթէ Խորհրդային "իութեան գերա-
գոյն պատգամաւոր մը որևէ հարցում ուղղէ Խորհրդա-
յին Միութեան կառավարութեան կամ գործավարի մը,
այս վերջինները պարտաւոր են երեք օրուան ընթաց-
քին բերանացի կամ գրաւոր պատասխան տալ անոր:

ՅՕԴ. 72.— Խորհրդային Միութեան ժողովրդա-
կան գործավարները ուղղութիւն կուտան Խորհրդ. Մի-
ութեան իրաւասութեան ենթակայ պետական և վար-
չական հաստատութիւններու գործունեան:

ՅՕԴ. 73.— Ժողովրդական գործավարները կը
հրապարակեն ժողովրդական գործավարներու Խորհուր-
դի որոշումները և հրամանագիրները և կը հետեւն ա-
նոնց գործադրութեան:

(Տես Հ. Յ. Դ. Էջ 20):

ՅՕԴ. 74.— Ժողովրդական գործավարութիւննե-
րը կը հանդիսանան կամ ամբողջ Միութեան ժողովր-
դական գործավարութիւններ, կամ ժողովրդական գոր-
ծավարութիւններ որոնք զեւգահեռաբար գոյութիւն ու-
նին և Խորհրդ. Միութեան և՝ առանձին հանրապետու-
թիւններու մէջ:

ՅՕԴ. 75.— Այբողջ Միութեան ժողովրդական
գործավարութիւնները կը զեկավարեն պետական վար-
չութեան այն բաժինները, որոնք իրենց յանձնուած

էին Խորհրդ. ամբողջ Միութեան մէջ կամ անմիջականուրէն և կամ իրենց նշանակած մարմիններու միջոցով։ (Տես էջ 20):

ՅՕԴ. 76. Ամբողջ Միութեան և առանձին հանրապետութիւններու մէջ զուգահեռաբար գոյութիւն ունեցող ժողովրդական գործավարութիւնները կը զեկավարեն իրենց յանձնուած պետական վարչութեան բաժնները, համապատասխան Խորհրդային հանրապետութեանց ժողովրդական գործավարութիւններու միջոցով։ (Տես Հ. Յ. Շր. էջ 20):

ՅՕԴ. 77.— Հետեւեալ ժողովրդ. գործավարութիւնները յատուկ են միայն Խորհրդ. Ընկերվարական հանրապետութիւններու Միութեան.— Պետական պաշտպանութեամ, արտաքիմ գործերու, արտաքիմ առևտուրի, հաղորդակցութեամ, թղթատարութեամ, հեռագրի և հեռախոսի, ջրայիմ փոխադրութեամ և ծամր նարտարարուեստի: (Տես Հ. Յ. Շր. էջ 20):

ՅՕԴ. 78.— Հետեւեալ ժողովրդական գործավարութիւնները զուգահեռաբար գոյութիւն ունին և՝ Խորհրդ. Միութեան և՝ Խորհրդային հանրապետութիւններու մէջ։— Սնունդի, թեմեւ արդիւնաբերութեան, անտառագործութեան, երկրագործութեան, Խորհրդային տնտեսութեանց (սովոր), ելեմտական, ներքին առևտուրի, ներքին գործերու, ճարտարարուեստի, ժողովրդական առողջապահութեան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ Վ ԳԼԽԻ

Գլուխ Vը, որ կը վերաբերի Խորհրդային Միութեան Բարձրագոյն վարչութեան օրկաններին, ամիսուած է 64-78 յօդուածների մէջ։

Խ. Միութեան Բարձրագոյն Վարչական օրկանն է Ժողովրդ. Գործավարների Խորհուրդը։ Ան կ'ընտրուի Գերագոյն Խորհուրդի կողմէ, այսինքն Միութեան Խորհուրդի 482 և Սղգերի Խորհրդի 238 պատգամաւորների կողմէ, ձայների մեծամասնութեամբ։ Այլ խօսքով, Գերագոյն Խորհրդի մէջ թելագրողը լինելով ուսու տարրը, այդ բարձրագոյն օրկանը պիտի լինի կազմուած բացառապէս ուսու շահերին համապատասխան տարրերէն։ Գործավարների Խորհուրդը բացարձակ զեկավարն է բոլոր հանրապետութիւնների, և անոր բոլոր կարգադրութիւնները պարտադիր են բոլոր հանրապետութիւններին։— Իրաւունք ունի փոխելու, ջնջելու հանրապետութեանց Գործավարների Խորհրդի բոլոր ուրշումները (տես 67, 68, 69 յօդուածները):

Խ. Միութեան Գործավարների Խորհուրդը պատասխան պիտի տայ հարցապնդումներին, բայց փաստօրէն պատասխանատու չէ նոյնիսկ Խ. Միութեան Գերագոյն Խորհրդի առաջ, քանի որ Գործավարների Խորհուրդը չի տապալուիր անոր կողմէ։

Փաստօրէն Գործավարների Խորհուրդը գերիշխան մի վարչութիւն է գոնէ 4 տարուան համար, կախուած միայն Գերագոյն Խորհրդի նախագահութեան (Յ1 հօգինոց) խմբից։

Այդ իշխանութիւնը կազմուած է

Ա. Նախագահ և փոխ-նախագահ։

Բ. " Ճրագրային յանձնաժողովի։

Գ. " Խորհրդային հակակուի յանձնաժողովի։

Դ. " Հայթայթան կոմիտէի։

Ե. " արուեստից

Զ. " բարձրագոյն կրթութեան։

1. Գործավար պետական պաշտպանութեան.
2. " արտաքին գործերու
3. " արտաքին առևտրի.
4. " հաղորդակցութեան.
5. " Թղթատարութեան.
6. " հեռագրի և հեռախօսի.
7. " ջրային փոխադրութեան.
8. " ծանր ձարտարարուեստի:

Այս վեց յանձնախումբերը, որ համազօր են Գործավարութեանց, և 8 Գործավարութիւնները յատուկ են միմիայն Մոսկուայի, իսկ անկախ հանրապետութիւնները պիտի չունենան այդ վարչական օրկանները. հետեւաբար անոնք զրկուած են հնարաւորութիւնից՝ այդ ճիշդերի վրայ հսկելու և ղեկավարելու:

Բացի վերոյիշեալ վեց յանձնախմբերէ և 8 գործավարութիւններէ, կան հետեւալ գործավարութիւնները.

1. Մոսկուգի.
2. Թեթև արդիւնաբերութեան.
3. Անտառագործութեան.
4. Երկրագործութեան.
5. Խորհրդային տնտեսութեան (սովորութեան).
6. Ելեկտրական.
7. Ներքին առևտրի.
8. Ներքին գործերու
9. Ճարտարարուեստի.
10. Ժողովրդական առողջապահութեան:

Այս տասը գործավարութիւնները յատուկ չեն միայն Մոսկուային, անոնք զուգահեռ գոյութիւն ունին քոլոր “անկախ”, հանրապետութեանց մէջ, բայց պայմանով որ (տես յօդ. 76) անոնք ղեկավարուին Մոսկուայի համապատասխան գործավարութեան հրահանգով։ Այլ

Խօսքով՝ “անկախ” հանրապետութեանց այդ 10 գործավարները կը դառնան պատասխանատու պաշտօնեաց Մոսկուայի 10 գործավարների համար։ Դժբախտ այդ 10 “անկախ” հանրապետութեանց, գործավարները փաստօրէն դառնալով հլու պաշտօնեաները Մոսկուայի իշրանց պետին, դժբախտութիւնը ունին միաժամանակ բնակչու իրանց ազգային խորհրդէն, իրանց ժողովրդին խարկանքը տալով, թէ պատասխանատու և ղեկավարն են իրանց ճիշդին, բայց ըստ էութեան ո՛չ ղեկավարն են և ո՛չ պատասխանատու ժողովրդի առաջ, այլ միայն Մոսկուայի իրանց պետի կամակատար պաշտօնեան։

Ասկէ առաջ պիտի գայ արհամարհանքը հանդէպ իր ընտրեալների և ժողովրդի և լորձնաշուրթին հպատակութիւնը Մոսկուայի և կամ ողբերգութիւնը պատասխանատութեան զգացյունքի հանդէպ իր ժողովրդի, որի հետեւանքն է կամ կղզիացում, անտարբերութիւն, ինքնասպանութիւն, որ վարակիչ հանգամանք առած է շնորհիւ “կաշկանդուած”, պատասխանատութեան այդ մեթոսին։

Վերոյիշեալ վեց յանձնախումբերէն և 18 գործավարութիւններէն գուրս արդեօք կը մնա՞յ որեւ պետական օրկան, “անկախ”, հանրապետութիւնները անկախօրէն և անկաշկանդ ղեկավարելու։ Ստալինը կ'ասէ. «այ՞ո, կայ», և այդ՝ քմացածն է»։ Բայց մենք (քմացածի) մէջ որբան կը մնանքներ, բան չենք գտնի։

Այդպէս չէ Դաշնակցութեան հասկացողութիւնը Նա անկախ հանրապետութեանց ղեկավարութեան սահմանը կ'ըմբռնէ հետեւալ կերպով։

Այսօր.— Ծ. Հ. Գ. (էջ 20).— Հայաստանը պիտի ըլլայ ժողովրդապար, անկախ նաեւապետութիւն, որուն սահմաններուն մէջ պիտի միանան նախկին Ռուսահայկական եւ Թրքանայկական հոգերը։

Միացեալ եւ անկախ Հայաստանի ժողովրդավար հանրապետութեան նիմնական օրենքները պիտի որոշուին Հայաստանի Սահմանադրի ժողովին կողմէ ընտրուած ընդհանուր, հաւասար, ուղղակի, զայտնի, համարական ընտրութեան սկզբունքով:

Պարզ է որ այդ 18 գործավարութիւններն ալ պիտի ունենան անկախ հանրապետութիւնները, գործավարները պիտի պատասխանատու լինին «անկախ» հանրապետութեանց Դերագոյն Խորհրդի առջև միայն և ոչ մի դրսի հրամանի ենթակայ, բացի իր ժողովրդի հրամանից և այն համաձայնութիւնից, որ ընդունուած է Ազգերի Խորհրդի Դաշնակցութեան կողմից:

ԳԼՈՒԽ VI

ԴԱՇՆԱԿՑԱԾ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՕՐԿԱՆՆԵՐԸ

ՅՈՒ. 79.— Խորհրդային իւրաքանչիւր հանրապետութեան մէջ վարչական իշխանութեան գերագոյն մարմինը կը հանդիսանայ այդ հանրապետութեան ժողովրդ գործավարներու խորհուրդը:

ՅՈՒ. 80.— Իւրաքանչիւր Խորհրդային հանրապետութեան ժողովրդական գործավարներու խորհուրդը պատասխանատու է այդ նոյն հանրապետութեան Դերագոյն Խորհրդին առջև:

ՅՈՒ. 81.— Իւրաքանչիւր խորհրդային հանրապետութեան ժողովրդական գործավարներու խորհուրդին կը պատկանի իրաւունքը հրապարակելու Խորհրդ. Միութեան ժողովրդական գործավարներու խորհուրդի հրամանագիրները և կարգադրութիւնները ու նաև հետևելու անոնց գործադրութեան:

ՅՈՒ. 82.— Իւրաքանչիւր խորհրդային հանրապետութեան ժողովրդական գործավարներու խորհուրդը իրաւունք ունի դադրեցնելու ինքնավար հանրապետութիւններու ժողովրդական գործավարներու խորհուրդի հրամանագիրներու և կարգադրութիւններու գործողու-

Թիւնը, ինչպէս նաև ջնջելու ինքնավար շրջաններու եւ շրջաններու խորհուրդներու գործադիր կոմիտէններու պատգամաւորներու և բանուորներու որոշումները եւ կարգադրութիւնները:

Յօդ. 83. — Իւրաքանչիւր խորհրդային հանրապետութեան գործավարներու խորհուրդը կը նշանակուի համապատասխան Գերագոյն Խորհուրդէն, հետեւել կազմով. — Ժողովրդական գործավարներու խորհուրդի նախագահ, փոխնախագահներ, ծրագրային յանձնաժողովի նախագահ և պարենաւորման, թեթև արդինաբերութեան, անտառագործութեան, հողագործութեան, խորհրդային տնտեսութեանց, ելեմտական, ներքին առևտուրի, արդարադատութեան, ժողովրդական առողջապահութեան, ժողովրդական լուսաւորութեան, տեղական արդինաբերութեան, քաղաքային տնտեսութեան, ընկերային ապահովման նախագահները:

Յօդ. 84. — Իւրաքանչիւր խորհրդային հանրապետութեան ժողովրդական գործավարները կը ղեկավարեն վարչական գործերը, որոնք կը մանեն անոր իրաւասութեանց մէջ:

Յօդ. 85. — Իւրաքանչիւր խորհրդային հանրապետութեան ժողովրդական գործավարներու վրայ պարտականութիւն կայ Հրապարակելու հրամանագիրները և կարգադրութիւնները Խորհրդային Միութեան ժողովրդական գործավարներու խորհուրդին, ինչպէս նաեւ առանձին գործավարութիւններուն, որոնք գուգաչեռաբար գոյութիւն ունին Խորհրդային Միութեան և առանձին հանրապետութիւններու մէջ:

Յօդ. 86. — Իւրաքանչիւր խորհրդային հանրապետութեան ժողովրդական գործավարութիւնները կը հանդիսանան կամ այդ հանրապետութեան և Խորհրդային

Միութեան մէջ զուգահեռաբար գոյութիւն ունեցող ժողովրդական գործավարութիւններ և կամ գործավարութիւններ՝ միայն տուեալ հանրապետութեան յատուկ:

(Տես էջ 20):

Յօդ. 87. Խորհրդ. Միութեան եւ առանձին հանրապետութեան մէջ զուգահեռաբար գոյութիւն ունեցող ժողովրդական գործավարութիւնները միաժամանակ կ'ենթարկութիւն ինչպէս տուեալ հանրապետութեան ժողովրդական գործավարներու խորհուրդին, այնպէս ալ Խոր. Միութեան համապատասխան գործավարութիւններուն:

Յօդ. 88. Հանրապետութեան ժողովրդական գործավարութիւնները անմիջականորէն կ'ենթարկութիւն տուեալ հանրապետութեան ժողովրդական գործավարներու խորհուրդին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ VI ԳԼԽԻ

Գլուխ VIը, որ ամփոփուած է 79—88 յօդուածների մէջ, «անկախ» հանրապետութեանց իշխանութեան սահմանները կը լնութագծէ: «Ենք արդէն տեսանք նախորդ գլխի մէջ, որ ամբողջ իշխանութիւնը կը պատկանի ոչ թէ անկախ հանրապետութեանց, այլ Մոսկվային: Բացառութիւն կը կազմէ լուսաւորութեան գործավարութիւնը, որ, ըստ երկոյթին, տարրական կը թութեան կալուածին մէջ ունի գործելու ազատութիւն, նախաձեռնութիւն և պատասխանատուութիւն՝ իր ժողովրդին առաջ: Այլևս «մացած» պետական ֆունկցիաներ չկան, որ անկախ հանրապետութիւնների իշխանութեանց թողնուին, ինչպէս Ստալինի Սահմանադրութեան 15րդ յօդուածը կարծես հեղնաբար կը խօս-

տանայ: Զարժեր մի գործավարութեան համար գոտծավարների խարուսիկ խորհուրդներ կազմել հանքապետութեանց մէջ և ռանկախ հանրապետութիւնները մէծադղորդ անունները շռայլել. զուարձութեան համար եղած այդ շռայլութիւնը՝ իրական շռայլութեան պատճառ կը դառնայ, աշխատաւորութեան գրապանէն դրամ քաշելով և սուտի ու սնափառութեան ախտով վարակելով նրան:

Հայութիւնը առանց (անկախութիւն) ունենալու արագքան իրաւունքներ ուներ, նոյնիսկ ցարական ուժիմին ներքոյ, անոր տարրական և միջնակարդ դպրոցները անկախ կը կառավարուէին և գեռ կան երկրներ, ուրաքանչեղ նոյնքան իրաւասութիւններ տրուած են մշակութային ասպարեզում, որքան չի տրուիր Ստալինեան Սահմանադրութեամբ:

Հայութեան համար Հայաստանի իրական անկախութիւնը և լրիւ ինքնավարութիւնը անհրաժեշտութիւն են ո՛չ միայն ազգային գիտակցութեան պահանջներին բաւարարելու համար, այլ և իր և իր հայրենիքի ֆիզիքական գոյութեան պահպանման համար: Նա գաղափարապաշտութեամբ հակառակ չէ եղած ֆետերասիոնին, բայց թէ՛ անցեալի և թէ՛ ներկայի փորձերը իր հարեան ժողովրդների և Ռուսիոյ հետ, կը թելադրեն որոշ վերապահութիւն, և իր շահերի կանիքի ապահովութեան դէպքում միայն ընդառաջնել ֆետերասիոնին՝ իբր հաւասար հաւասարի հետ:

Նա առաջները միամտութիւն ուներ արտաքին քաղաքականութեանը հաւասարութիւն Խաչնակցային Խորհրդին, բայց Սովետները ապացուցած են որ պիտի չփառականութիւնը ուղղամտութեան վրայ, որ անոնք ընդունակ են ֆետերասիոնի մէջ մտած անդամին դաւել և անոր ի-

դաւունքները վաճառել օտար ուժերի, առանց համաձայնութիւնը ունենալու իրան մաս կազմող Միութեան: Իրականութիւն են Առսկուայի և Կարսի թուրքուս դաշնագրերը, որտեղ հայկական հողերը, իրաւունքները զոհաբերուած են ընդհանուր Միութեան շահերը գոյցէ նկատի առնելով: Բայց հայութեան շահնալ կը պահանջէ չփառահել մի դաշնակցութեան, որ վաճառքի հանած է իրան. այս գրաւականներէն մէկն է արտաքին քաղաքականութեան մէջ իր ձայնը ունենալ և ի մասնաւորի իր հարեան պետութեանց քաղաքականութեան մէջ վճռական դեր և զիրք ունենալ: Այդ կը թելագրուի և անկէ, որ Կովկասի սահմանամերձ երկրների մէջ չուրջ 500,000 հայութիւն ունինք ցրուած, որի գոյութիւնը և շահը հայութեանը և Հայաստանին կը վերաբերի:

Հայաստանը կարող էր իբր անկախ երկիր դաշնակցիլ և. Միութեան հետ, բայց դաշնակցիլ չի նշանակի իր զինուորական ուժերէն զրկութիլ: Հայաստանը վինելով ծայրամաս, նա ինքը կարիք ունի դաշնակցից ուժերի կենտրոնացման և ոչ թէ իր ուժերի իրական զեկավարումէն զրկութիւն: Ստալինեան Ծրագրերը կը նախատեսէ զրկել Հայաստանի իշխանութիւնը իր զաւակների կազմակերպումէն իբր զինուորական ոյժ: Բայց կայ, հաւասականութիւն որ հայկ. ոյժերը ուռսական զեկավարութեան ներքոյ պիտի չօգտագործուին Հայաստանի դէմիսի: Այդ հաւասականութիւնը չկայ: 1914-թուի պատերազմը ապացուցեց, որ Ռուսները բացին Կովկասի Ճակատը թուրքերի առաջ և 150,000 հայ զինուորութիւնը փոխադրեցին Մազուրեան լճերի և Կարպագի վրայ փացաւելու համար, այդ նոյնը պատահեց սովիետների օրօք 1917-18ին. իսկ այսօր որ սովիետները գաղտնի և յայտնի դաշնագրեր ունեն

Թուրքիոյ, իրանի հետ, որոնց բովանդակութիւնը ծածռւկ կը պաշուի ամենից, աւելի՝ շահագրգուած Հայաստանէն, ամենայն հաւանականութիւն կայ չարաշար գործածելու մեր վստահութիւնը. արդ՝ պէտք է, որ Հայաստանի զինուո՞վ վստահութիւնը կազմակերպումը, ղեկավարութիւնը լի՞րական ուժերի կազմակերպումը, ղեկավարութիւնը լի՞րական Հայաստանի իշխանութեան ձեռին:

Այդպէս էլ բոլոր մնացած պետական պաշտօնները՝ նպատակայարմար է և օգտակար ոչ միայն Հայաստանի, այլև Միութեան համար, որ լինի ամբողջապէս Հայաստանի ձեռին: Այդ հասունացած պահանջը կը վերաբերի և բոլոր Միութեան մաս կազմող ազգերին. այդ իրաւունքների վերահաստատումով է որ պիտի հնար լինի լուծել ազգային բարդ հարցը, միացնել ազգերը փոխագործ կարձ վստահութեամբ և շահերով և այդպիսով դիւրացնել աշխատաւոր դասի իրերահասկացողութիւնը, ներդաշնակութիւնը, ընկերվարական գաղափարները իրագործելու համար: Աթալինհան նախագիծը այդ գիւրութիւնը չի տար և այդ է անոր գլխաւոր թերութիւնը և անոր ձախողութեան պատճառը, որ պիտի տեսնենք շուտով:

Հայաստանը բացի վերոյիշեալ ընդհանուր պատճառներէն, ունի և մասնաւոր պատճառներ Խորհրդային նոր սահմանադրութեան հանդէպ խիստ վերապահ լինելու:

ա) Ինչպէս Դաշնակցութիւնը, նոյնպէս և բոլշևիկները դրած են մի արդար սկզբունք, որ իրաբանչիւր ազգ, անկախ իր թուէն և որակէն, երբ համախումբ մի շրջանի մէջ կ'ապրին և ունին իրարու հետ ընդհանուր սահմաններ, պիտի ինքնորոշուին անկախ ազգային սահմանների մէջ: Հակառակ այդ սկզբունքին, հակառակ որ Դարաբաղի, Լեռնային Գանձակի հայ ժողովուրդը

քանիցս իր կամքը յայտնած է իբր հայ միանալ իր մայր հայրենիքին, և հակառակ անոր, որ Ատրբէջանի բոլշևիկ պետը՝ Նարիմանով ևս գտած էր անհրաժեշտութիւնը հայկական այդ գաւառների Հայաստանին կցման, բայց յիշեալ շրջանները միացուած են Ատրբէջանին:

Ինչպէս և հայկական բորջալուն և Ախալքալաք, որոնց բնակչութիւնը հայ է ու սահմանակից Հայաստանին և որոնք բանիցս իրանց կամքը յայտնած են Հայաստանին միանալու ոյնիսկ կոմունիստ հայերի պահանջով, բայց յիշեալ շրջանները չեն միացուած Հայաստանին և միացուած են Վրաստանին:

բ). Ինչպէս Դաշնակցութիւնը, նոյնպէս բոլշևիկները հիմական սկզբունք ունեցած են:

Որ.— այն փոքրամասնութիւնները, որ համախումբ կ'ապրին մի շրջանի մէջ տեսականորէն, բայց չունին ընդհանուր սահմաններ իրանց բուն հայրենիքին հետ և կը գտնուին մի այլ ոչ ցեղակից հանրապետութեան սահմանների մէջ, պիտի ինին ինքնափար հանրապետութիւններ, բայց պիտի գտնուին այն հանրապետութեան զեկավարութեանտակ, որի սահմաններով շրջապատուած են:

Հակառակ այս սկզբունքին նախիջեանի հանրապետութիւնը, որ շրջապատուած է Հայաստանով և չունի ընդհանուր սահմաններ Ատրբէջանի հետ և թէև պատմականորէն, աշխարհագրականորէն, տնտեսապէս կապուած է Հայաստանին, բայց միացուած է Ատրբէջանին: Գոնէ այդ անարդարութիւնը պատճառ ունի թուրքուս ներքին համաձայնութիւնը, այդ պարագային առաւել ևս հրամայական կը գառնայ նախիջեանը Հայաստանին ենթարկել, պանթուրանիզմի մղձաւանջը չէզոքացնելու և Ծուսից՝ Հայաստանի շահերը վաճառքի հանելու աղետալի բայլերի առաջըն առնելու համար:

գ). Ինչպէս Դաշնակցութիւնը, նոյնպէս պոլշեիկները տեսականօրէն հակամիտ դն, որ այն փոքրամամութիւնները, որ համախումբ չեն ապրիր և ցրուած են իբր փոքրամասնութիւնների այլ շրջանների մէջ, անոնք պիտի ունենան իրենց ազգային մշակոյթը և պիտի պահեն իրենց ազգային ինքնութիւնը:

Հակառակ դրան, սովորական երկրամասերի հայ փոքրամասնութիւնները կը նկատուին ձուլման ենթակառար, զուրկ ազգային մշակոյթէ:

Դ) Դաշնակցութիւնը և բոլշեիկները տեսականօրէն հակառակ չեն, որ մի ժողովուրդ իր բնուն հայրենիքէն տեղահան անելը և փացնելը իմպերիալիստական նկատումներով իրաւունք չէ, և մի ժողովուրդ իրաւունք ունի իր բնագաւառի պաշտպանութեան և ամբողջացման համար:

Ա.յդ պատճառով Դաշնակցութեան նպատակն է Միացեալ Հայաստանը և հակառակ դրան՝ բոլշեիկները թէե Լենինի հրամանագրով իրաւացի գտած են Միացեալ Հայաստանի ամբողջացումը, բայց իրականութեան մէջ անոնք եղած են Միացեալ Հայաստանի իրագործման խոչընդուները ինչպէս Բրեստ-Լիտովսկի, նոյնպէս Բագուի, Կարսի, Մոսկուայի համաձայնութիւններով և ներկայ արտաքին քաղաքականութիւնով:

Ա.յս չորս մասնակի պահանջներն իսկ բաւ պիտի լինէին, որ քաղաքական գետնի վրայ մենք շահ չտեսնեանք նոր սահմանագրութեան և առհասարակ Ուուսիայէն կախում ունենալուն մէջ, թէպէտ ընկերային հարցերի մէջ մեր տարակարծութեանց հիմքերը նուազած ըլլացին:

ԳԼՈՒԽ VII

ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՑ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՕՐԿԱՆՆԵՐԸ

Յ0Դ. 89.— Իւրաքանչիւր խորհրդային հանրապետութեան բարձրագոյն պետական օրկանը կը հանդիսանայ անոր Գեր. Խորհուրդը:

Յ0Դ. 90.— Իւրաքանչիւր ինքնավար հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը կընտրուի բոլոր բազացիներէն չօրս տարին անդամ մը, համաձայն տուեալ հանրապետութեան սահմանագրութեան հաստատած կանոններուն:

Յ0Դ. 91.— Ինքնավար հանրապետութեան Գեր. Խորհուրդը կը հանդիսանայ անոր միակ օրէնսդրական օրկանը.

Էջ 18.— Կազմակերպել ապակենտրոնացման ամենալայն նիմունների վրայ:

Յ0Դ. 92.— Իւրաքանչիւր ինքնավար հանրապետութիւն ունի իր սեփական սահմանագրութիւնը որ ուշագրութեան կառնէ անոր բոլոր առանձնայատկութիւնները, բայց որ համապատասխան է խորհրդային հանրապետութեան սահմանագրութեան:

Յ0Դ. 93.— Ինքնավար հանրապետութեանց Գեր. Խորհուրդը կընտրէ իր նախագահը և կը նշանակէ ժողովրդական գործափարներու խորհուրդը, համաձայն սահմանագրութեան:

Գ Լ Ո Ւ Խ VIII

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՕՐԿԱՆՆԵՐԸ

Յօլոր երկրամասերու և բոլոր շըմ-
ջաններու, ինչպէս նաև ինքնավար շրջաններու, գաւառ-
ներու, քաղաքներու, գիւղերու տեղական-պետական օր-
կանները կը հանդիսանան բոլոր աշխատաւորներու պատ-
գամաւորակ. խորհուրդները:

Էյ 21. Լայն տեղական իմբնավարութիւն համայնական օրկան-
ներու:

Յօլ. 95.— Առանձին երկրամասերու, շրջաններու,
գաւառներու, քաղաքներու եւ գիւղերու բոլոր աշխա-
տաւորներու պատգ. խորհուրդները կը ընտրուին երկու
տարուան պայմանաժամով:

Յօլ. 96.— Աշխատաւորներու պատգամաւորական
խորհուրդները ընտրական կարգը կը ճշգուի առանձին
հանրապետութիւններու սահմանադրութեամբ:

Յօլ. 97.— Աշխատաւորներու պատգամաւորական
խորհուրդները ուղղութիւն կուտան իրենց ենթակայ
վարչական օրկաններու գործունեութեան, կ'ապահովեն
կարգ ու կանոն և յարգանք որէնքի հանդէպ, կը պաշտ-
կարդ:

Պանեն քաղաքացիներու իրաւունքները և կ'իրագործեն
տեղական տնտեսական և մշակութային շինարարու-
թիւնը:

Յօլ. 98.— Աշխատաւորներու պատգամաւորական
խորհուրդները որոշումներ կուտան ի. Միութեան և ա-
ռանձին հանրապետութիւններու կողմէ իրենց տրուած
օրէնքի սահմաններուն մէջ:

Յօլ. 99.— Տեղական խորհուրդներու գործադիր
և վարչական օրկանները կը հանդիսանան գործադիր
կոմիտէները, անոնց կողմէ ընտրուած և բաղկացած նա-
խազահէ, փոխ նախագահէ և անդամներէ:

Յօլ. 100.— Գիւղական խորհուրդներու գործադիր
և վարչական օրկանները կը հանդիսանան այդ խոր-
հուրդներու նախագահը և փոխ նախագահը:

Յօլ. 101.— Տեղական խորհուրդներու գործադիր
օրկանները իրենց գործողութեանց մասին հաշիւ կուտան
ինչպէս զիրենք ընտրող խորհուրդին, այնպէս ալ բարձ-
րագոյն խորհուրդի գործադիր օրկանին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ VII-VIII ԳԼՈՒԽՆԵՐՈՒ

Այս երկու գլուխները, որ 89—101 յօդուածների մէջ
ամփոփուած են, կը վերաբերին ինքնավար հանրապետու-
թեանց, ինքնավալ ըրջանների, տեղական իշխանու-
թեանց իրաւասութեանց և պարտականութեանց: Ուշա-
գրութեամբ երբ հետեւելու լինէք, կը տեսնէք որ կը
բացակային նախաձեռնութիւնը, վատահութիւնը և հա-
ւատը տեղական ուժերի հանդէպ. անոնք փաստօրէն իրա-
ւագուրի պաշտօնեաներ են, բայց ձեփ համար գատապար-
աւած են ժողովների և խորհուրդների: Չարժիր աւելի
ծանրանալ անոնց իրաւասութեանց գնահատման վրայ,

երբ օտնկախ հանրապետութեանց իրաւասութիւնները՝
նախաձեռնութիւնները հաւասարուած են ոչնչի. հաս-
կընալի է անոնց ենթակայ շրջանների իրաւասութեանց
ոչինչ լինելը:

Եեր հասկացողութեամբ՝ պէտք է հաւատալ ժողո-
վըրդական եւ ներքին խաւերին, պէտք է տալ անոնց նա-
խաձեռնութիւն, իրաւունք. այդ է միակ դրդիչ ոյժը յառա-
ջադիմութեան, գաստիարակութեան. այդ հասկանալով
է, որ Դաշնակցութեան ծրագրի էջ 18 և 21ը կ'ուրուա-
գծէ.

«Կազմակերպել ապակենտրոնացման ամենալայն հի-
մունքների վրայ» (էջ 18):

«Լայն տեղական ինքնավարութիւն համայնական
օրկաններու» (էջ 21):



Գ Լ Ո Ւ Խ Խ

ԴԱՏԱՐԱՆ ԵԻ ԴԱՏԱԽԱՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 102.— Խորհրդային Միութեան մէջ արդա-
րադատութիւնը կը գործադրուի հետևեալ հաստա-
տութեանց միջոցով.

Խորհրդային Ընկերվարական հանրապետութիւննե-
րու Միութեան գերագոյն գատական ատեան, Միութեան
առանձին հանրապետութիւններու գերագոյն գատական
ատեաններ, շրջանային գատարաններ, ինքնավար հան-
րապետութիւններու և ինքնավար շրջաններու գատա-
րաններ, ինչպէս նաև ժողովրդական գատարաններ:

Խանօթ. — Ծր. Հ. Յ. (էջ 21).— «Զրի դատավարութիւն»:

ՅՕԴ. 103.— Բոլոր գործերը ատեաններու և դա-
տարաններու մէջ կը քննուին ժողովրդական գատարան-
ներու մասնակցութեամբ, բացառութեամբ օրէնքով նա-
խատեսուած մասնաւոր գէպերու:

ՅՕԴ. 104.— Խորհրդային Միութեան Գերագոյն
գատական ատեանը կը հանդիսանայ գատական բարձ-
րագոյն օրկանը: Անոր կ'իյնայ հսկել Խորհրդային Մի-
ութեան և պատճին հանրապետութիւններու բոլոր դա-
տական հաստատութեանց գործունէութեան վրայ:

ՅՕԴ. 105.— Խորհրդային Միութեան գերագոյն
գատական ատեանը, ինչպէս նաև Խ. Միութեան մաս-

Նաւոր դատարանները կ'ընտրուին Խորհրդա ին Միութեան Գերագոյն Խորհուրդէն, 5 տարի պայմանաժամով։

ՅՕԴ. 106.— Միութեան առանձին Հանրապետութիւններու գերագոյն դատական ատեանները կ'ընտրուին նոյն Հանրապետութեանց Գեր. Խորհուրդներէն, 5 տարի պայմանաժամով։

ՅՕԴ. 107.— Ինքնավար Հանրապետութիւններու գերագոյն դատական ատեանները կ'ընտրուին նոյն Հանրապետութեանց Գեր. Խորհուրդներէն, 5 տարի պայմանաժամով։

ՅՕԴ. 108.— Շրջանային և ինքնավար շրջաններու ատեանները կ'ընտրուին աշխատաւորներու պատգամաւորական խորհուրդներէն, 5 տարի պայմանաժամով։

ՅՕԴ. 109.— Փողովրդական դատարանները կ'ընտրուին քաղաքացիներէն, ընդհանուր, ուղղակի, Հասասար և գաղտնի ընտրական իրաւունքի հիման վրայ, 3 տարի պայմանաժամով։

ՅՕԴ. 110.— Դատավարութիւնը տեղի կ'ունենայ առւեալ Հանրապետութեան կամ ինքնավար Հանրապետութեան և կամ ինքնավար շրջանի լեզուով, որպէսզի այդ լեզուն չգիտցողներուն ապահովուած ըլլայ կարելիութիւնը ծանօթանալ փաստաթուղթերուն, թարգմանի միջոցաւ։ Ասկէ զատ, այդ անձերը իրաւունք ունին դատարանին մէջ խօսելու իրենց մայրենի լեզուով։

ՅՕԴ. 111.— Խորհրդային Միութեան մէջ բոլոր դատավարութիւնները տեղի կ'ունենան Հրապարակով (բացառութեամբ օրէնքով նախատեսուած դէպէերու)։ Ամբաստաննեալներուն կ'ապահովուի պաշտպանութեան իրաւունքը։

ՅՕԴ. 112.— Դատարանները անկախ են և պա-

տասխանատու միայն օրէնքին առջև

ՅՕԴ. 113.— Վերին Հսկողութիւնը օրէնքի գործադրութեան նկատմամբ ժողովրդական գործավարներու և անոնց ենթակայ Հաստատութեանց, ինչպէս նաեւ Կ. Միութեան բոլոր քաղաքացիներուն կողմէ՝ կը պատկանի և. Միութեան դատախազին։

Ծանօթ. — Եր. 3. Հ. Դ. (էջ 20).— «Հանրապետութիւնները անկախ են»։

ՅՕԴ. 114.— Կ. Միութեան դատախազը կը նշանակուի և. Միութեան Գեր. Խորհուրդներէն, 7 տարի պայմանաժամով։

ՅՕԴ. 115.— Հանրապետութիւններու և շրջաններու, ինչպէս նաև ինքնավար Հանրապետութիւններու և ինքնավար շրջաններու դատախազները կը նշանակուին Խորհրդային Միութեան դատախազէն, 5 տարի պայմանաժամով։

ՅՕԴ. 116.— Շրջանակալին դատախազները կը նշանակուին առանձին Հանրապետութիւններու դատախազներէն, 5 տարի պայմանաժամով։

ՅՕԴ. 117.— Դատախազութեան օրկանները կը գործեն կատարելապէս անկախ տեղական իշխանութիւններէն և կ'ենթարկուին բացառապէս և. Միութեան դատախազին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ IX ԳԼԽԻ

IX գլուխը, 102-117 յօդուածների մէջ ամփոփուած,
դատարանների և դատախազութեան մասին է. անոնց կազմը յարև նման է ժողովրդական գործավարութեանց կազմակերպման ձևին.— Մոսկուայի Գերագոյն Խորհուրդը կը նշանակէ գերագոյն դատարանը և բարձրագոյն դատախազը և անոնք են փաստական վերին հսկողը և թելադրողը հանրապետութեանց դատարանական և դատախազական օրկաններին: Միշտ դէպի կենտրոնացում եւ հանրապետութեանց իրաւասութեանց աահմանափակում:
Կը կարծուէր թէ գերագոյն դատարանը պիտի սահմանափակուէր լոկ միջ-հանրապետական դատերի հսկումին և վճռելուն մէջ և պիտի թողնէր հանրապետութիւնները ազատ՝ երենց միջի խնդիրները վերջնապէս լուծելու իրանց բարձրագոյն դատաստանական մարմիններով, բայց այդ տարրական վստահութիւնն իսկ կը պակսի դէպի «անկախ հանրապետութեանց» արդարադատութեան նախանձախնդրութիւնը և վերից վար հսկողութիւնը եւ Մոսկուան վերին իշխանութիւն դարձնելու ամէն ձիգ կը թափուի:

Աւելորդ յոգնութիւն է Մոսկուայի կողմէ, և ո՛չ մի վնաս չպիտի լինէր ի. Միութեան ուժին և վարկին համար, եթէ դատաստանական օրկանների վերին իշխանութիւնը փոխանակ Մոսկուայի, կազմէին անկախ հանրապետութեանց գերագոյն դատաստանական օրկանները: Բուրժուական Ամերիկայէն գոնէ օրինակ առնելու է եւ գոնէ այդ ասպարեզին մէջ “անկախ հանրապետութիւնները” պէտք է, անկախացուէին:

ԳԼՈՒԽ X

ՔԱՂԱՔԱՑԻՒԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆԻՔՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅՈՒ. 118. — Խորհրդային Միութեան քաղաքացիները ունին աշխատանքի իրաւունք: Աշխատանքը կը վարձատրուի համաձայն իր քանակին և որակին:

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. Դ. (Էջ 24 յօդ 24). — «Աշխատանի սակարաններ»:

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. Դ. (Էջ 24 յօդ. 18). — «Աշխատանի ուժնորդութեան հովանաւորում զիտական առողջապահիկ պահանջներու համեմատ»:

ՅՈՒ. 119. — Խորհրդային Միութեան քաղաքացիները հանգիստի իրաւունք ունին. այդ իրաւունքը կ'ապահովուի աշխատանքի օրուան կրամտումով մինչև 7 ժամ բանուորներու նշանակելի մեծամասնութեան համար, ամէն տարուան արձակուրդով՝ պահպանելով անսականը, սանաթորիոմներու, հանգստեան տուններու և ակումբներու ցանցով՝ դրուած աշխատաւորներու տրամադրութեան տակ:

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. Դ. (Էջ 23 յօդ. 14). — «Օրական 8 ժամուան աշխատան ու վնասակար գործերու մէջ աւելի պակաս»:

Էջ 24 «Կիրակօրեայ լիակատար հանգիս»:

ՅՈՒ. 120. — Խորհրդային Միութեան քաղաքացիները ունին ապահովութեան իրաւունք ծերութեան, հի-

ւանդութեան և աշխատանքի ընդունակութիւնը կորսնցնելու պարագային։ Այդ իրաւունքը կ'երաշխաւորուի պետական ապահովագրութեամբ, բժշկական ձրի օգնութեամբ, սանաթորիոմներով։

Ծանօթ. Ծր. Հ. Յ. (էջ 24) «Բանութեան ապահովագրում դրամիս պատահաներու, նիւանդութեան, ծերութեան եւ անզործութեան պարագաներուն, ի համեմ պետութեան եւ զործարաններուն։

(էջ 24) «Ձրի դարմանուն Արհեստաւորին ձրի աշակցութիւն»։

80Դ. 121. — Խորհրդային Միութեան քաղաքացիները կրթութիւն ստանալու իրաւունք ունին։ Այդ իրաւունքը կ'ապահովուի պարտագիր և ձրի նախնական կը թութեամբ, պետական թոշակներու դրութեամբ բարձրագոյն կրթարաններու մէջ ուսանողներու ահագին մեծամասնութեան համար, դասաւանդութեամբ մայրենի լեզուով, ձրի գործնական դասաւանդութեամբ գործարաններու, խորհրդային տնտեսութիւններու, տրակտորային կայաններու և այլնի մէջ։

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. (էջ 21). — «Ընդհանուր, պարտադիր եւ ձրի սկզբանական ուսում պետութեան հասունին։ Դպրոցներու աշխարհականացում։ Գասաւանդութիւն մարտենի լեզուով։»

80Դ. 122. — Խորհրդային Միութեան մէջ կինը այրմարդուն հաւասար իրաւունքներ ունի տնտեսական, հանրային, մշակութային և քաղաքական կեանքի բոլոր առարկեաներուն մէջ։ Այդ իրաւունքը մասնաւորաբար կ'առպահովուի մայրական շահերու երաշխաւորութեամբը, յղութեան շրջանին՝ արձակուրդով, ծննդաբերական հաստատութիւններու և մանկապարտէզներու ցանցով։

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. (էջ 21). — «Հաւասար իրաւունք, առանց սեռի խրցութեան։»

(էջ 24) «Կիներու եւ մանուկներու գիտերային աշխատանքները խափանել։ Կիներ ազատ պէտք է ըլլան աշխատանք՝ ծննդաբերութիւն և տարար առաջ եւ 6 տարար ենթ։»

80Դ. 123. — Խորհրդային Միութեան բոլոր քաղաքացիները, առանց ցեղի և ազգութեան խարութեան, հաւասար իրաւունքներ, ունին։ Քաղաքացիներու իրաւունքներուն ունեցակի կամ անուղղակի սահմանափակումը կամ, ընդհակառակն, մէկ կամ միւս ցեղին կամ ազգութեան պատկանելու համար՝ անոնց առանձնաշնորհութեր տալը, ինչպէս նաև քարոզութիւնը ցեղային կամ ազգային առանձնականութեան, ատելութեան կամ արհամարհանքի, — այդ ամէնը կը պատժուի օրէնքով։

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. (էջ 21). — «Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերու եւ կրօնական համայնքներու։»

80Դ. 124. — Քաղաքացիներուն խղճի ազատութիւնը ապահովելու համար, Խորհրդային Միութեան մէջ եկեղեցին բաժնուած է պետութենէն, իսկ պարոցը՝ եկեղեցին կը ճանչցուի բոլոր քաղաքացիներու կդաւանանքի, ինչպէս նաև հակակրօմակամ պրոպակամտի ազատութիւմը։

Ծանօթ. — Ծր. Հ. Յ. (էջ 21). — «Եկեղեցիի բաժնուած պետութենէն։ Կրօնի անհատական խղճի գործ է։»

(էջ 21) «Կատարեալ հաւասարութիւն կրօնական համայնքներու։»

80Դ. 125. — Ընկերվարական կարգերը ամրապնդելու նպատակով և աշխատաւորներու շահերուն համար, խորհրդային քաղաքացիներուն կ'ապահովուի։ Ա) խօսքի ազատութիւն, Բ) մամուլի ազատութիւն, Գ) հաւաքոյթներու և միթինկներու ազատութիւն, Դ) փողոցային ցոյցերու ազատութիւն։ Այս իրաւունքները կ'ապահովուին պետութեան կողմէն, որ աշխատաւորներու և անոնց կազմակերպութիւններու տրամադրութեան տակ կը դնէ տպարաններ, թուղթի պաշարներ, հանրային շենքեր, փողոցներ, թղթատար, հեռագիր, հեռախոս և այլն։

Ծանօթ.— Ծր. Հ. Յ. (Էջ 21).— Ազատութիւն խօսմի, մամուլի, խղճի, ժողովներու, միութիւններու գործադրութեանու:

ՑՕԴ. 126.— Խորհրդային Միութեան քաղաքացիներուն կազմակերպելու արհեստական կազմակերպութիւններ, համագործակցականներ, երիտասարդական և մարզական կազմակերպութիւններ, ժողովրդական պաշտպանութեան կազմակերպութիւններ, մշակութային, տեխնիքական և գիտական ընկերութիւններ։ Ամենէն գործութեայ եւ գիտակից քաղաքացիները կը միանամ համայնավար կուսակցութեամ մէջ։

Ծանօթ.— Ծր. Հ. Յ. (Էջ 21).— «Գործարանական վերաբերութեան լինցութիւն բանութեան կողմէ; Բանութեան մասնակցութիւն գործառներու ներքին վարչական գործերուն»;

Էջ 21. «Ազատութիւն միութիւններու»:

ՑՕԴ. 127.— Խորհրդային քաղաքացիներուն կ'ապահովուի անձի անձեռնմխելիութիւն։ Ոչ ոք չի կրնարձերբակալուիլ առանց դատարանի կամ դատախազի կարգարութեան։

Ծանօթ.— Ծր. Հ. Յ. (Էջ 21).— «Անբոնաբարելիութիւն անձի»։

ՑՕԴ. 128.— Օրէնքով կ'ապահովուին բնակարաններու անձեռնմխելիութիւնը և թղթակցութեան դադունիքը:

Ծանօթ.— Ծր. Հ. Յ. (Էջ 21).— «Անբոնաբարելիութիւն բնակարանի եւ նամակագրութեան»։

ՑՕԴ. 129.— Խորհրդային Միութիւնը ապաստանի բրաւունը կուտայ այն օտար քաղաքացիներուն, որոնք կը հետափնդուին աշխատաւորներու շահերը պաշտպանելու կամ գիտական գործունէութեան եւ կամ ազգային ազատագրութեան պայքարին համար։

ՑՕԴ. 130.— Խորհրդային Միութեան ամէն քաղաքացի պարտաւոր է յարգել սահմանադրութեան որոշումները, օրէնքները և աշխատանքի կարգապահութիւ-

նը և պարկեցտօրէն կատարել հանրային պարտականութիւնը։

ՑՕԴ. 131.— Խորհրդային Միութեան ամէն քաղաքացի պարտաւոր է յարգել ընկերվարական սեփականութիւնը։ Ընկերվ. սեփականութեան վնաս հասցնողները ժողովուրդի թշնամիներ կը նկատուին։

ՑՕԴ. 132.— Ընդհանուր զինուորագրութիւն։ Խորհրդային Միութեան կարմիր բանակին մէջ զինուորական ծառայութիւնը պատուաւոր պարտականութիւն է բոլոր քաղաքացիներուն համար։

ՑՕԴ. 133.— Խորհրդային Միութեան իւրաքանչիւր քաղաքացիի սրբազն պարտականութիւնն է յայրենիքի պաշտպանութիւնը, հայրենիքի դաւաճանութիւնը, երդմազանց լինելը, թշնամու կողմը անցնիլը, պետութեան զինուորական ուժին վնասելը, լրտեսութիւնը օտար պետութեանուգտին, որպէս ամենածանր յանցանքներ պիտի պատժուին օրէնքի ամենածանր խստութեամբ։

ԵԳՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ Հ ԳԼԽԻ

Տամներորդ գլուխը, որ քաղաքացիների հիմնական իրաւունքներին և պարտականութիւններին կը վերաբերի, ամփոփուած է յօդ. 118—133-ի մէջ։ Այդ յօդուածների տակ բհրուած Հ. Յ. Դրագրի հատուածները ցոյց կուտան որ համարեա բոլոր կէտերին համամիտ է Դաշնակցութիւնը, և Ստալինեան սահմանադրութեան այդ յօդուածները պահանջն են և Դաշնակցութեան։

Բաբերախտաբար, սովետների հետ այդ ասպարէին մէջ տարակարծութեանց պատճառները պիտի վերանան, եթէ Ստալինեան սահմանադրութիւնը խօսք չըմայ, այլ գործ դառնայ։

Բնդումնելով հանդերձ 118—133 յօդուածների հիմ-
նական կէտերի անվիճելի լինելը մեզ համար, միայն
բացատրութեան կարիքը կայ 133 յօդուածի, որտեղ
կ'ըսուի. «իւրաքանչիւր քաղաքացու սրբազան պարտա-
կանութիւնն է հայրենիքի պաշտպանութիւնը»: Հայրենի-
քի գաւաճանութիւնը, երդմնագանց լինելը և այլն պի-
տի պատժուին օրէնքի ամենածանր խստութեամբ»:

Ընդունելի է, և արժանի են այդպիսիք մահուան
պատժի. բայց ո՞րն է քաղաքացու հայրենիքը, իր
«անկախոց» հանրապետութիւնը և անոր շահը, թէ Խոր-
Միութիւնը: Ի՞նչ պարագաներ ալ լինին, ի՞նչ բէժիմ
ալ լինի հայրենիքի մէջ՝ նա պարտական է պաշտպանել
հայրենիքը և չգաւաճանել անոր. այդ հասկնալի է.
բայց նոյն պահանջը կարելի չէ գնել Խ. Միու-
թեան հանդէպ, եթէ այդ քաղաքացու հայրենիքը անի-
րաւուած և գաւաճանուած է Խորհրդային Միութեան
կողմէ: Նա իւրեւ հայրենասէր՝ պարտական է թշնամի
լինել իր հայրենիքի իրաւունքները ոտնահարողներին: Այդ
օրինակը գժրախտաբար գոյութիւն ունի: Սովե-
տական Հայաստանը, թէ՛ իրաւունքների սահմանափա-
կուով է թէ՛ անոր երկրամասերի վաճառքի հանուելովը,
Խ. Միութեան կողմէ անիրաւուած է. արդ՝ ան թշնամի է
Հայաստանին, իսկ թշնամուն գէմ պայքարելը պարտա-
կանութիւն է հայրենասէր քաղաքացիների համար: Այս
Ճշդումով մնացեալ կէտերը անառարկելի են:

ԳԼՈՒԽ XI

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԴՐՈՅԹԸ

ՅՈՒ. 134.— Ընտրութիւնները Խորհուրդներու,
ինչպէս նաև Խորհրդային Միութեան և առանձին հան-
րապետութեանց ու շահաններու Գերագոյն Խորհուրդին,
կը կատարուին ընդհանուր, հաւասար, ուղղակի ընտ-
րութեան իրաւունքի հիման վրայ եւ գաղտնի քուե-
արկութեամբ:

Խանօր.— Մր. Հ. Պ. (Էջ 21).— «Ընդհանուր, հաւասար, զաղ-
նի եւ համեմատական ընտրութիւն»:

ՅՈՒ. 135.— 18 տարեկանին հասած բոլոր քաղա-
քացիները, բացառութեամբ խելագարներու և գատա-
րանով իրաւագրկուածներու, իրաւաւունք ունին մաս-
նակցելու ընտրութիւններուն եւ ընտրուելու:

ՅՈՒ. 136.— Ընտրական իրաւունքները հաւասար
են ամէնուն համար, առանց ցեղի, ազգութեան, գաւա-
նանքի, կրթութեան աստիճանի, ընկերային ծագման,
բնակութեան պայմանաժամկի եւ զբաղման խտրութեան:

ՅՈՒ. 137.— Կանայք ունին նոյն ընտրական իրա-
ւունքները, ինչ որ այրերը:

Յօդ. 138. — Բանակին մէջ ծառայող բաղաքացիները՝ ուրիշ բաղաքացիներու նման՝ ընտրելու և ընտրուելու իրաւունք ունին:

Յօդ. 139. — Բոլոր հաստատութիւններու համար ընտրութիւնները տեղի կ'ունենան ուղղակի բուեարկութեամբ:

Յօդ. 140. — Ընտրութիւնը գաղտնի է:

Յօդ. 141. — Ընտրութիւններու ատեն թեկնածուները կը ներկայացուին ընտրական շրջաններէն: Թեկնածուներ ներկայացնելու իրաւունքը կ'ապահովուի հանրային կազմակերպութիւններու և աշխատաւորներու ընկերութիւններու, այն է՛ համայնակար կուսակցութեամ կազմակերպութեամց, արհեստակցակամ միութիւններու, համազործակցակամներու, երիտասարդակամ և մշակութային կազմակերպութիւններում:

Ծանօթ. — Մր. Հ. Պ. (Եց 21). — «Էնդիամուր, ճաւասար, գալտնի եւ համեմատական ընտրութիւն»:

Յօդ. 142. — Իւոաքսնչեւր պատգամաւոր պարտաւոր է իր գործունէութեան մասին հաշիւ տալ զինքը ընտրողներուն: Անոր պատգամաւորի իրաւունքը կարող է ամէն ատեն առնուիլ իրմէ՝ քաղաքացիներու մեծամասնութեան որոշումով, համաձայն օրէնքով սահմանուած կարգին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ XI Գլու

11-րդ գլուխը կը վերաբերի ընտրական համադրութիւնն, ամփոփուած 134—142 յօդուածների մէջ:

Այս կէտին մէջ ալ Ատալինի նախագիծը յառաջդիմութիւն արած է. ան կը կանգնի «ընդհանուր, հաւասար, գաղտնի ընտրութեանց» հիմունքի վրայ:

Մեր տեսակէտը եղած է և է.

«Ծնդհանուր, հաւասար, գաղտնի և համեմատական ընտրութեան» ձեւը:

Ի հարկէ, տարբերութիւն կայ մեր և Ստալինի ընտրական ձեի մէջ, բանի որ մեր ձգտումը «համեմատական» պիտի լինի՝ փոքրամասնութեանց կարծիքները և ձայները չկորցնելու համար, բայց կարելի է անտեսել այդ, եթէ չըլլար 141րդ յօդուածը, որտեղ ընտըրութիւններու ազատութիւնը կը ցանկացուի խեղել թեկնածուների ցանկ ներկայացնելու իրաւունքները վերապահչելով մասնաւորներին և ոչ ամէնքին: Այդ ցոյց կուտայ, որ Ստալին կը վախնայ ժողովրդէն, կուսակցութիւններէն — այդ միաժամանակ ցոյց կուտայ, որ բարոյապէս գեռ խիստ թշոյ են բոլցեկիները և ընտըրութիւններ կամ պիտի չլինեն, կամ լինեն մարակի տակ: Մեր համոզումն է որ իշխանութիւնը ժողովը դի համար է և ոչ թէ ժողովուրդը՝ իշխանութեան համար. ուստի՝ իշխանութիւնը վախ պիտի չունենայ ազատ ընտրութիւններից, թէկուզ ժողովուրդը տապալէ զայն, գուցէ անարդարօրէն, և թէկուզ վատագոյնը ընտըրէ. ժողովուրդը իր գլխու տէրն է և շահն ու վնասն ալ իրեն կը պատկանի, և ո՛չ թէ իշխանութեան:

Գ Լ Ո Ւ Խ

ԶԻՆԱՆՇԱԽ, ԴՐԾՅ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՅՕԴ. 143. — Խորհրդային Միութեան զինանշանն է մանգաղ և մուրճ՝ երկրագունդի վրայ, արեփ ձառագայթներու մէջ, հետեւալ մակագրութեամբ, Միութեան բոլոր լեզուներով. «Պրոլետարիստ բոլոր երկիրներու, միացէք»: Զինանշանի վրայ հնդածայր աստղը:

ՅՕԴ. 144. — Խորհրդային Միութեան դրօշը կարմիր կերպասէ է, ոսկի մանգաղով և մուրճով վերի անկիւնին մէջ և հնդածայր աստղով:

ՅՕԴ. 145. — Խորհրդային Միութեան մայրաքաղաքն է Մուսկուս:

ԵԳՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ XII ԳԼԽԻ

XII գլուխը 143-145 կը վերաբերի զինանշանին, դրօշին և մայրաքաղաքին:

Բնական է, որ ամէն մի պիտ ւթիւն պիտի ունենայ իր խորհրդանիշը, իր դրօշը, զինանշանը, որոնք պիտի լինին քաղաքացիների համար սրբազն՝ այնքան, որքան իրենց հայրենիքը, որք ան իրենց ազգը:

Բայց այդ յօդուածների մէջ մոռացուած են լիշատակութիւնները 11^ա անկախի հանրապետութեանց սեփական դրօշների և զինանշանների: Եթէ անոնք անկախու են, կամ եթէ նոյնիսկ անկախ չեն, բայց մի միութիւն, ազգութիւն են. բացի իրանց ընդհանուր աշխատաւորական դրօշեն, պիտի ունենան իրանց սեփականը: Ազգային դրօշների գեմ կոռուլ կը նշանակէ կոռուլ ազգերի ինքնութեան դէմ. արդ՝ եթէ չի պարտադրուի, այլ ընդհակառակը կ'արգիլուի անկախ 11-հանրապետութիւններին ունենալու իրանց դրօշները, զինանշանները, մայրաքաղաքները, այդ կը նշանակէ թէ սահմանադրութեան մէջ յայտարարուած «անկախութիւնները» խարկանք են:

Հայաստանը պէտք է ունենայ իր առանձին հայկական դրօշը, զինանշանը, որ տարբեր պէտք է լինի բոլորից. գիւր չի՞ գայ Եռագոյնը, այդ չէ էականը. թող ստեղծուի մի նորը, բայց հայկականը միայն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Գ Լ Ո Ւ Խ Խ III

ՍՈՂՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

807. 146.— Սահմանադրութեան ամէն տեսակ փոփոխութիւն հնարաւոր է միայն Գերագոն Խորհուրդի ողոշումով, որ ընդունուած է իւրաքանչիւր պալատի մէջ առնուազն երկու երրորդի մեծամասնութեամբ :

ՆԲ. Հ. Պ. (Էջ 20.) «Հայատանը պիտի ըլլայ ժողովրդավայր անկախ հանրապետուրին»

Ազգերու Խորհուրդն է լինելու որոշողը սահմանադրութեան փոփոխութեան:

Գլուխ առ գլուխ Ստալինեան Սահմանադրութեան և Դաշնակցութեան ծրագրի տրամադրութիւնները քընչ նելէ վերջ, գժուար չէ գտնելը, թէ Դաշնակցութեան և բոլշևիկների հակամարտութեան և համամտութեան կետերը որո՞նք են:

Ստալինեան ծրագիրը եկած է ջնջելու հակամարտութեան կարգ մը կէտեր և աւելցնելու համամտութեան կէտերի թիւը բայց նա եկած է նաև ասելու մեղ որ հակամարտութեան հիմնական պատճառներ գեռ շատ կան և անոնք այնքան խոր են և այնքան կենսական հայ աշխատաւոր ժողովրդի համար, որ տակաւին շատ հեռու է այն օրը, երբ կարելի պիտի լինէր վերջ տալ փոխադարձ պայքարին և համերաշխօրէն լըծուիլ ընկերվարութեան կառուցան և ազգերի ներգաշնակ, ստեղծագործ միասնակեցութեան սրբազն աշխատանքին:

Ստալինեան սահմանադրութիւնը իր 13 գլուխներով և 146 յօդուածներով կը բաժնուի երկու գլխաւոր կարգի:

Ա. Բնկերային, բաղաբացիական կառոյցը և իրաւունքները, ամփոփուած՝ երեք գլուխների մէջ— I. 1-13. X. 118-133. XI, 134-142.

Բ. Պետական-վարչական, ազգային-բաղաքական կառոյցը և իրաւունքները, որ ամփոփուած են մնացած տառը գլուխների մէջ:

Դաշնակցութիւնը ցարդ հակառակ էր բոշկեկներին՝ այդ երկու կալուածների մէջ ևս:

Ստալինեան նախագիծը իր ներկայ ձևով կուգայ:

բառնալու հակառակութեան կէսը:

ինչպէս վերը ցոյց տուինք, համեմատելով Դաշնակցութեան ծրագրի տրամադրութիւնները Ստալինեան սահմանադրութեան ընկերային-քաղաքացիական յօդուածների հետ, այդաեղ այլեւս չկան հիմնական տարբերութիւններ մեր և անոնց միջնեւ:

Կը մնայ ուրեմն եզրակացնել.

Այն պարագային, երբ գործադրութեան դրուին ըՍտալինեան սահմանադրութեան ընկերային-քաղաքացիական I. X. և XI դլութիւնները, Դաշնակցութիւնը հոտոչ թէ հակասութեան հիմեր պիտի ունենայ, այլ ընդհակառակն, պիտի բաղձայ որ այդ յօդուածների տրամադրութիւնները իրագործուին, այն փոքրիկ ուղղումներով սակայն, զորս մատնանշած ենք:

Արդ, ո՞ւր կը մնայ մեր և բոլցեկիների հակառակութիւնը: Մէկ կարևոր կէտի մէջ, որ կը վերաբերի Սահմանադրութեան պետական-վարչական, ազգային-քաղաքական կառոյցին և իրաւունքներին:

Այդ հարցերի շուրջն է որ այսուհետեւ պիտի կենտրոնանան Դաշնակցութեան և ամբողջ հայ աշխատաւորութեան հակառակութեան միջոցները, մինչև խորտակուի կամ բարեփոխուի այդ հակայեղափոխական ամրոցը եւս:

Որո՞նք պիտի լինեն դրական պահանջները բարեփոխելու համար ազգային-քաղաքական, պետական-վարչական սխալ հիմունքները:

Անոնցմէ գլխաւորները կարելի է ամփոփել հետեւալ կէտերի մէջ:

Ա. Ոչնչացում յօդուած 14-ի և ստեղծում համախումբ, նոյնացեղ ժողովրդների պետական անկախութեան. այդ ժողովրդների կամաւոր դաշնակցութեան հաւասար իրաւունքների սկզբունքով:

Բ. Ոչնչացում աշխարհակալական օբաժանեա զիտիրեսցեսի քաղաքականութեան, ինչպէս նաև արտաքին ազգեցութեանց տակ կամ ուրիշ հաշիւներով հանրապետութեանց և ինընավար շրջանների կամայական սահմանագծման. հաստատում պետական սահմանների՝ ըստ ազգագրական հիմերի, համախմբելով նոյն ազգին պատկանող սահմանակից հաստատածները միւնոյն ազգային-պետական սահմանների մէջ:

Գ. Ոչնչացում տիրապետող եւ տիրապետուող, ձրնշող և ձնշուող ազգային դրութեանց. համախումբ ապրող, բայց իրենց հայրենիքի հետ ընդհանուր սահմաններ ունեցող ժողովրդներին տալ ինքնավարութիւն, ապակենտրոնացման լայն հիմերով, այն պետութեան սահմանների մէջ, ուր անոնք կը գտնուին.

Դ. Ոչնչացում ազգային ցրուած, ոչ-համախումբ փոքրամասնութեանց բռնի ձուլման քաղաքականութեան, ապահովելով այդ փոքրամասնութեանց ազգային-մշակութային յառաջդիմութիւնը:

Ե. Ոչնչացում անուանական «անկախութեանց» եւ ստեղծում ինքնիշխան, իրականապէս անկափ պետութեանց. անոնց կամաւոր դաշնակցումը՝ հաւասար իրաւունքներով եւ անկափ իրենց քանակէն՝ ընկերվար ըսկըզբունքների իրագործման և իրենց հայրենիքների պաշտպանութեան նպատակներով:

Զ. Զնջում յօդուած 34-ի և բոլոր այն միջոցների, որ նպատակ ունին ուսւերի թուական առաւելութիւնը միջոց ծառայեցնել թուապէս թոյլ ժողովրդների իրաւունքների եւ ձայնի խեղզումին և թուապէս ուժեղների գերակայութեան և գերիշխանութեան հաստատումին թոյլերի վրայ. իրագործումը յօդուած 35-ի և ազգերի ու պետականութեանների հաւասար ներկայացուցչութեան միջոցով՝ հաստատում Դաշնակցային մի Գերագոյն Խորհուրդի:

Է. Վերացում հանրապետութեանց իրաւունքների սահմանափակման և ջնջում յօդուածներ 14-ի և 60-ի և օրէնսդրական ու վարչական լիակատար իրաւունքների փոխանցում հանրապետութեանց Դերագոյն Խորհուրդներին և անոնցմէ բիսած և անոնցմէ միայն կախում ունեցող իշխանութեանց ու գործավարութեանց:

Ը. Փօփոխում Միութեան կենտրոնական վարչական իշխանութեան և ստեղծում կենտրոնական ղեկավարութեան՝ Դաշնակցային պետութեանց Խորհրդի համաձայնութեամբ, առանց խախտելու հանրապետութեանց գերիշխանութիւնը:

Թ. Վերացում Մոսկուայի գործավարների միջամբառութեան՝ հանրապետութեանց գործերին. անկախ հանրապետութեանց գործավարների պատասխանատուութիւնը՝ բացառապէս իրենց ժողովրդների ընտրողների առողեւ:

Ժ. Խնդրավար հանրապետութեանց ու շրջանների իրաւունքների ընդլայնում, համաձայն ապակենտրոնացման սկզբունքին:

ԺԱ. Դատաստանական հաստատութիւնների անկախութիւն և ազատութիւն Մոսկուայի միջամբառութենէն և անոնց կազմակերպումը ու ղեկավարութիւնը հանրապետութեանց Գերագոյն Խորհուրդների կողմէն:

ԺԲ. Էնտրութեանց և թեկնածու ներկայանալու բացարձակ ազատութիւն, ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի և համեմատական սկզբունքով, անկախ ընտրողի և թեկնածուի ազգային, կրօնական, դասակարգային և կուսակցական պատկանելութենէն:

ԺԳ. Հաստատում սեփական գրօշի, զինանշանի և մայրաքաղաքի ինչպէս դաշնակցային միութեան, այնպէս առանձին հանրապետութեանց համար:

ԱՀԱ' այս տասներեք գլխաւոր կետերի մէջ կը կա-

յանան մեր և բոլշևիկների հակառակութեան և թըշնամութեան բուն պատճառները: Թող անոնք գիտնան, թէ ինչո՞ւ պիտի դիմադրեն մեզ, և մենք ալ գիտնանք, թէ որո՞նք են մեր ձգտման և նպատակների հիմնական կետերը:

Այս տասներեք պահանջներէն, որ ընդհանուր պետական-քաղաքական բնոյթ ունին, կը բխին մի քանի գործնական հարցեր, որոնք հայութեան համար կենսական նշանակութիւն ունին. անոնցմէ մէկ քանին կապուած են ոչ միայն մեր իրաւունքների պահպանման, այլ և մեր ֆիզիքական գոյութեան հետ:

Ա. Նախիջեանի հանրապետութեան Հայաստանի հանրապետութեան ղեկավարութեան յանձնումը.

Բ. Խնդրավար Ղարաբաղի Հայաստանի կցումը.

Գ. Լեռնային Գանձակի, Բորջալուի, Ախալքալաքի շրջանների սահմանների վերաբնութիւնը և ազգերի ինքնորոշման սկզբունքի գործադրութիւնը.

Դ. Գաղութների վտանգուած հայութեան ներգաղթը.

Ե. Միացեալ Հայաստանը:

Դաշնակցութեան այսօրուան գործնական քաղաքականութեան և նպատակադրութեան առաջին հանգրուանը պիտի գառնան զերոյիշեալ տասներեք ընդհանուր և հինգ մասնակի խնդիրները:

200

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

	Էջ
1. Նախաբան	4
2. Գլուխ I. Ընկերային կառույցը	10
3. Եղրակացութիւն Ա. Գլխի	14
4. Գլուխ II. Պետական կազմը	17
5. Եղրակացութիւն Բ. Գլխի	23
6. Գլուխ III. Խորհրդ. Հնկ. Հանր. Միութեան Բարձրագոյն Պետ. Խեխանութիւնը	32
7. Եղրակացութիւն Գ. Գլխի	38
8. Գլուխ IV. Դաշնակցային կառավարութեանց Գեր.	42
9. Եղրակացութեան Դ. Գլխի	43
10. Գլուխ V. Խորհրդ. Միութեան Պետական-Վարչական Օրկանեները	47
11. Եղրակացութիւն Ե. Գլխի	50
12. Գլուխ VI. Դաշնակցած հանրապետութեանց Վարչական օրկանեները	55
13. Եղրակացութիւն Զ. Գլխի	57
14. Գլուխ VII. Խեխավար հանրապետութեանց Բարձրագոյն Վարչական օրկանեները	63
15. Գլուխ VIII. Պետական Խեխանութեան Տեղական օրկաները	64
16. Եղրակացութիւն Է. Ը. զլուխներու	65
17. Գլուխ IX. Դատարան և դատավարութիւն	67
18. Եղրակացութիւն Թ. Գլխի	70
19. Գլուխ X. Քաղաքացիների հիմնական իրաւունքները և պարտականութիւնները	71
20. Եղրակացութիւն Ժ. Գլխի	75
21. Գլուխ XI. Լնուական համադրոյքը	77
22. Եղրակացութիւն Ժ. Ա. Գլխի	78
23. Գլուխ XII. Զինուաւան, դրօս, մայրաբաղաց	80
24. Եղրակացութիւն Ժ. Ֆ. Գլխի	80
25. Գլուխ XIII. Սահմանադրութեան փոփոխութիւններ	82
26. Լնդիանուր Եղրակացութիւն	83

ՀՀ Ազգային գրադարան



NL0124065

34.898

ԳԻՒ՝ 5 Ե. Դ.